

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ**

ԹԻՎ 151

ԱՊՐԻԼ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 2

Դրական պարտավորություն

Կյանքի իրավունք

Չթույլատրված արձակուրդում գտնվող ոստիկանության աշխատակցի կողմից մատուցողին ոչ մահացու կրակոց հասցնելը. *խախտում*

Sašo Gorgiev v. "the former Yugoslav Republic of Macedonia" - 49382/06

ՀՈԴՎԱԾ 3

Դրական պարտավորություններ

Անմարդկային վերաբերմունք

Խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից 1940թ.-ին Կատինում մահապատժի ենթարկված լեհ բանտարկյալների ճակատագրերի մասին համարժեք բացատրություն տալուց հրաժարվելը. *խախտում*

Janowiec and Others v. Russia - 55508/07 և 29520/09

Անմարդկային վերաբերմունք

Արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք

Ձերբակալումից հետո դիմումատուի դեմքին արցունքաբեր գազի բացթողումը. *խախտում*

Ali Güneş v. Turkey - 9829/07

«Վտանգավոր կալանավոր» ռեժիմի երկարատև կիրառում. *խախտում*

Piechowicz v. Poland - 20071/07

Արդյունավետ հետաքննություն

Ոստիկանության հետ համագործակցելու պատճառով միևնույն ազատագրկման վայրի բանտարկյալների կողմից կատարված վրեժի առիթով հանցագործություն՝ *խախտում*

J.L. v. Latvia - 23893/06

Հանձնում

ԱՄՆ-ի սուպեր-մաքս բանտում ազատագրկման պայմանները՝ *հանձնումը չի հանգեցնի խախտման*

Babar Ahmad and Others v. the United Kingdom - 24027/07 և այլն

ՀՈԴՎԱԾ 6


6§1 (քաղաքացիական)

Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ

Բանտային խորհրդի բանտարկյալին ժամանակավոր ազատ արձակելու մասին պահանջի շարունակական մերժումը՝ առանց վարչական դատարաններ բողոքարկելու իրավունքի՝ *խախտում չկա*

Boulois v. Luxembourg [ՄԴ] - 37575/04

Արդար դատաքննություն



Հետմահու մեղքի ճանաչում, որը ներառում է ժառանգների կողմից պարտավորություն՝
խախտում

[Lagardère v. France - 18851/07](#)

Հոդված 6§1 (քաղաքացիական) (քրեական)

Արդար դատաքննություն

Մեղադրյալի այրիից գույքի բռնագրավումը՝ խախտում չկա

[Silickienė v. Lithuania - 20496/02](#)

Հոդված 6§1 (քրեական)

Քրեական մեղադրանքի որոշման հարց

Արդար դատաքննություն

Արդար դատաքննության բացակայության մասին գանգատ ոստիկանության արձանագրությունը անվավեր ճանաչելու վերաբերյալ համաձայն օրենսդրական փոփոխության՝ խախտում չկա

[Nicoleta Gheorghe v. Romania - 23470/05](#)

Հոդված 6§2

Անմեղության կանխավարկած

Մեղադրյալի այրի կնոջ գույքի բռնագրավում՝ չկա խախտում

[Silickienė v. Lithuania - 20496/02](#)

Մեղավորության հետմահու ճանաչում, որը հանգեցրել է ժառանգի քաղաքացիական պատասխանատվության՝ խախտում

[Lagardère v. France - 18851/07](#)

ՀՈԴՎԱԾ 8

Անձնական կյանքը հարգելը

Համալսարանի դասախոսի դատապարտումը՝ հետազոտության նյութերը հասանելի դարձնելու մասին դատարանի հրամանին չենթարկվելու համար. Հոդված 8, անկիրառելի, անընդունելի

[Gillberg v. Sweden \[UՊ\] - 41723/06](#)

Մոր արտաքսումից հետո երեխայի որդեգրումը՝ չնայած հոր դիմադրությանը. խախտում

[K.A.B. v. Spain - 59819/08](#)

Արյունապղծության համար դատապարտում՝ չկա խախտում

[Stübing v. Germany - 43547/08](#)

Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը

Ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը


Բնակարան ունենալու իրավունքի նկատմամբ հարգանքը

Գնչուների ծրագրված արտաքսումը կառուցված բնակավայրից՝ առանց նոր տուն տրամադրելու առաջարկության՝ արտաքսումը կհանդիսանար խախտում

[Yordanova and Others v. Bulgaria - 25446/06](#)

Ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք

Արտոնության տրամադրման մերժում երկարաժամկետ բնակակցին՝ իր զուգընկերոջ դեմ քրեական վարույթի ընթացքում վկայություններ տալու ընթացքում. խախտում չկա



Van der Heijden v. the Netherlands [ՄԴ] - 42857/05

ՀՈԴՎԱԾ 9

Կրոնի ազատություն

Հրեական տոնի օրը նախատեսված դատական նիստի հետաձգման մերժում՝ *չկա խախտում*
Francesco Sessa v. Italy - 28790/08

ՀՈԴՎԱԾ 10

Ազատ արտահայտվելու իրավունք

Համալսարանի դասախոսի դատապարտումը՝ հետազոտության նյութերը հասանելի դարձնելու մասին դատարանի հրամանին չենթարկվելու համար՝ *10-րդ հոդվածը կիրառելի չէ, անընդունելի*:

Gillberg v. Sweden [ՄԴ] - 41723/06

Լրագրողի պայմանական ազատագրվում և արգելք զբաղվելու մասնագիտական աշխատանքով՝ պատասխանելու իրավունք չտրամադրելու կամ մերժման համար պատճառաբանություն չտրամադրելու համար՝ *խախտում*

Kaperzyński v. Poland - 43206/07

ՀՈԴՎԱԾ 13

Արդյունավետ միջոց

Իրավական պաշտպանության նոր միջոցի անարդյունավետությունը Եվրոպական դատարանի պիլոտային վճռի հիման վրա ներպետական իշխանությունների կողմից՝ բնակարանի տրամադրման որոշման չկատարման հետ կապված՝ *խախտում*

Ilyushkin and Others v. Russia - 5734/08 7 և այլն

ՀՈԴՎԱԾ 14

Խտրականություն (թիվ 1 Արձանագրություն 1-ին հոդված)

Կաթոլիկական և Ավետարանչական քահանայական գործունեության տարիների հաշվարկային տարբերություն՝ կենսաթոշակի չափը որոշելիս՝ *խախտում*

Manzanas Martín v. Spain - 17966/10

ՀՈԴՎԱԾ 33

Միջպետական հայց

Ռուսական իշխանությունների պաշտոնական վարքագծի ենթադրյալ մոդելը, որը հանգեցրել է Վրաստանի քաղաքացիների Կոնվենցիոն իրավունքների բազմաթիվ խախտումների՝ *իրավազորությունից հրաժարում Մեծ Պալատի օգտին*


Georgia v. Russia (II) - 38263/08

ՀՈԴՎԱԾ 35

Հոդված 35 § 1

Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում՝ Թուրքիա

Նախադեպային իրավունքի փոփոխություն, որը թույլ է տալիս անձանց անտառային տարածքներին պատկանող իրենց գույքի համար փոխհատուցման հայց ներկայացնել՝ *անընդունելի*



Altunay v. Turkey (dec.) - 42936/07

Հոդված 35 § 3

Դատարանի իրավասությունը կապված իրավախախտման ժամանակային գործոնի հետ
Պատասխանող երկրում Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 58 տարի առաջ մահվան դեպքերի նկատմամբ Դատարանի ժամանակավոր իրավասությունը՝ *ընդունված նախնական առարկություն*

Janowiec and Others v. Russia - 55508/07 and 29520/09

Բողոք ներկայացնելու իրավունքի չարաշահում

Դատարանում բացատրություններ և գործին առնչվող կարևոր տեղեկություններ տալու դիմումատուի ներկայացուցիչների անգործությունը՝ հաստատված նախնական առարկություններ

Bekauri v. Georgia (preliminary objection) - 14102/02

ՀՈԴՎԱԾ 35 § 3 (բ)

Ոչ էական վնաս

Գլխավոր դատախազության կարծիքը Վարչական դատարանում բողոք բերած անձին տեղեկացնելու ծախսողումը՝ *անընդունելի*
Liga Portuguesa de Futebol Profissional v. Portugal (որոշում) - 49639/09

ՀՈԴՎԱԾ 46

Պիլոտային վճիռ՝ ընդհանուր բնույթի միջոցառումներ

Պատասխանող պետությունից պահանջվել է մեկ տարվա ընթացքում ապահովել քրեական դատարաններում դատավարությունների տևողության համար իրավական պաշտպանության միջոց

Michelioudakis v. Greece - 54447/10

Ընդհանուր միջոցառումներ

Օրենքները կատարելու Պատասխանող Պետության պարտավորությունը՝ Կոսովոյում ապահովագրված անձանց կենսաթոշակի վճարման երաշխավորման համար

Grudić v. Serbia - 31925/08

Պատասխանող պետության պարտավորությունը ձեռնարկել միջոցառումներ հանրային հողի վերականգմանն ուղղված հրամանների կատարման ընթացքում համաչափության երաշխավորման համար


Yordanova and Others v. Bulgaria - 25446/06

ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾ

Գույքը

Եվրոպական միության անդամ պետություններից ներմուծված օգտագործված մեքենաների օդի աղտոտման հարկի սահմանում՝ *անընդունելի*

Iovïtoni and Others v. Romania (dec.) - 57583/10, 1245/11 and 4189/11



Դրական պարտավորություն

Սեփականության իրավունքից զրկում

Սնանկության գործով կառավարչի կողմից մասնավոր բանկի ակտիվների անօրինական բաշխումը. *խախտում չկա*

[Kotov v. Russia \[GC\] - 54522/00](#)

Գույքի օգտագործման վերահսկողություն

Մեղադրյալի այրիի սեփականության բռնագրավումը. *խախտում չկա*

[Silickienė v. Lithuania - 20496/02](#)

Ընդդատության գիշումը Մեծ պալատին

ԴԱՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բրայթոնի կոնֆերանսը Դատարանի ապագայի վերաբերյալ
2. Ընտրությունը

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Արդարացի փոխհատուցման պահանջների վերաբերյալ պրակտիկայի ուղեցույց
2. Տեղեկատվական-թեմատիկ թերթիկը գերմաներեն և ռուսերեն լեզուներով
3. Դատարանը 50 հարցերում
4. 2011թ-ի տարեկան զեկույց. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը

ՀՈԴՎԱԾ 2

Դրական պարտավորություն Կյանքի իրավունք

**Չթույլատրված արձակուրդում գտնվող
ոստիկանության աշխատակցի կողմից
մատուցողին ոչ մահացու կրակոց
հասցնելը՝ խախտում**

***Sašo Gorgiev v. “the former Yugoslav
Republic of Macedonia”***

Գանգատ թիվ 49382/06

Վճիռ 19.4.2012 [V բաժանմունք]

Փաստերը: Ոստիկանության պահեստազորային Ռ.Դ-ն գիշերային ծառայության ընթացքում ինքնակամ թողնելով ծառայության վայրը մոտ տարածությունից կրակել և վիրավորել էր դիմումատուին, ով սրճարանի մատուցող էր: Հետագայում Ռ.Դ-ն դատապարտվել է անվտանգության դեմ ուղղված ծանր հանցագործությունների համար, քանի որ առաջին ատյանի դատարանը գտավ, որ նա, գտնվելով ակոհոլի ազդեցության տակ, անզգուշությամբ քաշել էր ձգանը: Նրա նկատմամբ կիրառվել է պատիժը պայմանականորեն չկիրառելը: Քաղաքացիական դատավարություններում դատարանները մերժել էին վնասի հատուցման մասին հայցը, որը դիմումատուն հարուցել էր ընդդեմ Պետության/Ներքին գործերի նախարարության այն հիմքով, որ դեպքի ժամանակ Ռ.Դ-ն չէր գործում իր պաշտոնական պարտականությունների շրջանակներում:

Օրենքը: 2-րդ հոդված: Անկախ այն հանգամանքից, թե արդյոք եղել էր սպանելու որևէ դիտավորություն, դիմումատուն եղել է այն վարքի զոհը, որը իր բնույթով վտանգել էր նրա կյանքը: Հետևաբար, 2-րդ հոդվածը կիրառելի է: Ոստիկանության պահեստազորային լինելով հանդերձ՝ Ռ.Դ-ն հանդիսանում էր պետության ներկայացուցիչ, կրակելու ժամանակ նա չէր գործում իր պաշտոնական պարտականությունների շրջանակներից: Դատարանը պարտավոր էր գնահատել հանգամանքների ամբողջականությունը և հաշվի առնել աշխատակցի վարքագծի բնույթն ու հանգամանքները, պարզելիս թե արդյոք Պետությունը, այնուամենայնիվ, կարող էր պատասխանատու լինել աշխատակցի անօրինական գործողությունների համար: Միջադեպը տեղի էր ունեցել Ռ.Դ-ի աշխատանքային ժամերին, երբ նա պարտավոր էր լինել ոստիկանության բաժանմունքում ծառայության մեջ: Թեև անվիճելի էր, որ նա, գտնվելով ակոհոլի ազդեցության տակ, լքել էր իր աշխատանքային վայրը առանց թույլտվության, նա եղել է իր համազգեստով և կրակել դիմումատուին իր ծառայողական զենքով: Մինչդեռ, իշխանությունները չէին կարող օբյեկտիվորեն կանխատեսել Ռ.Դ-ի վարքագիծը, պետությունը պարտավորություն ուներ նախատեսելու և իր ներկայացուցիչների, հատկապես՝ ժամանակավոր մորթիլիզացված պահեստազորայինների նկատմամբ խստորեն կիրառելու նրանց պաշտոնական պարտականությունների համատեքստում տրամադրած զենքերի չարաշահումն կանխելու համարժեք և արդյունավետ երաշխիքների համակարգ: Կառավարությունը

չէր վկայակոչել որևէ նման կանոնադրություն, սակայն Դատարանը նշեց, որ Ներքին գործերի իրավական ակտի 26-դ բաժինը պահանջում է, որ պետության ներկայացուցիչներն իրենց պարտականությունները կատարեն «ամբողջ ընթացքում լինելով կամ չլինելով ծառայության մեջ», որը գործնականում նշանակում է, որ իրենք միշտ պետք է կրեն իրենց ծառայողական զենքը: Կառավարությունը չէր տվել որևէ ցուցում ոստիկանությունում ծառայելու Ռ.Դ.-ի և զենք կրելու համապատասխանության մասին, երբ այդ առարկան պետք է ենթարկվեր առանձնակի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Այս հանգամանքների լույսի ներքո, Ռ.Դ.-ի արարքները վերագրելի են պատասխանող պետությանը:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

41-րդ հոդված՝ 12,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, 3,390 եվրո որպես նյութական վնասի փոխհատուցում:

(Տե՛ս նաև *Gorovenky and Bugara v. Ukraine*, թիվ 36146/05 և 42418/05, 2012թ.-ի հունվարի 12-ի թիվ 148 նահաղեպային տեղեկատվություն)

ՇՈՂՎԱԾ 3

**Դրական պարտավորություններ
Անմարդկային վերաբերմունք**

**Խորհրդային գաղտնի ոստիկանության
կողմից 1940թ.-ին Կատինում մահապատժի**


**ենթարկված լեհ բանտարկյալների
ճակատագրերի մասին համարժեք
բացատրություն տալուց հրաժարվելը՝
խախտում**

Janowiec and Others v. Russia

Գանգատ թիվ 55508/07 և 29520/09

Վճիռ 16.4.2012 [V բաժանմունք]

Փաստերը. Դիմումատուները լեհ սպաների և ղեկավարների ազգականներն են, ովքեր կալանավորվել էին սովետական ճամբարներում կամ բանտերում Լեհաստանի Հանրապետություն 1939թ.-ի սեպտեմբերին Կարմիր Բանակի ներխուժումից հետո և ովքեր ավելի ուշ՝ 1940թ.-ի ապրիլ և մայիս ամիսներին ավելի քան 21000 այլոց հետ առանց դատական քննության սպանվել էին խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից: Ձոհերին հուղարկավորել էին Կատինի անտառում՝ ընդհանուր գերեզմաններում: Չանգվածային սպանությունների քննությունը սկսվել է 1990թ.-ին, բայց դադարեցվել՝ 2004թ.-ին: Որոշման տեքստը մնացել էր գաղտնի մինչ օրս, և այն կամ քննության վերաբերող ցանկացած այլ տեղեկություն անհասանելի էր դիմումատուներին: Այդ որոշումը հասանելի դարձնելու և հույժ գաղտնի դրոշմագիրը գաղտնազերծելու մասին նրանց կրկնվող պահանջները շարունակաբար մերժվել են ռուսական դատարանների կողմից: Ռուսական իշխանությունները նաև հրաժարվել էին որոշման օրինակն Եվրոպական դատարան ներկայացնել այն հիմնավորմամբ, որ փաստաթուղթը վճռորոշ չէր դիմումատուների գործի համար և որ ներպետական օրենսդրությամբ իրենց արգելվել էր գաղտնազերծել գաղտնի



տեղեկությունը: Իրենց ազգականների իրավունքների վերականգնման վերաբերյալ դիմումատուների պահանջները մերժվել էին գլխավոր զինվորական դատախազության և ռուսական դատարանների կողմից:

Օրենքը: 38-րդ հոդված: Քննությունը դադարեցնելու մասին 2004թ.-նի որոշման օրինակը ներկայացնելու վերաբերյալ Դատարանի պահանջին չկատարելու Կառավարության պատճառաբանությունները հիմնավոր չէին: Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ որոշումը չէր պարունակում վճռորոշ տեղեկություն՝ Դատարանը գործի ուսումնասիրության համար անհրաժեշտ ապացույցները գնահատելու բացարձակ հայեցողություն ունի: Դատարանի կողմից քննությունն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ապահովելու դատավարական պարտավորության համապատասխանությունը *sine qua non* պահանջ էր Դատարանում արդյունավետ քննության անցկացման համար, և պետք է ուժի մեջ մտներ անկախ դատավարության ընթացքում կայացրած դատարանի որևէ որոշման և անկախ դրա հնարավոր ելքի:

Այն փաստարկը, որ ներպետական օրենսդրությամբ Կառավարությանն արգելվում էր գաղտնի տեղեկություն հաղորդել, նույնպես թերի էր: Քանի որ, համաձայն Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի Կոնվենցիայի 27-րդ հոդվածի ներպետական օրենսդրությունը չի կարող վկայակոչվել որպես հիմնավորում Պայմանավորվող Պետության կողմից պայմանագիրը չկատարելու համար, Կառավարությունը չէր կարող հիմնվել ներպետական իրավական խոչընդոտների վրա Դատարանի կողմից

գործի քննության համար անհրաժեշտ միջոցներով չապահովելու համար: Ուշադրությանն արժանի էր նաև այն, որ Կառավարությունը ոչ մի տեսանկյունից չի բացատրել իրենց մտահոգությունների ստույգ էությունը: Դատարանն իր հերթին անկարող էր առանձնացնել որևէ օրինական անվտանգ ուսումնասիրություն: Մասնավորապես, ապացուցված չէր, որ նախորդ ամբողջատիրական կարգի հանցագործությունների հանրային և թափանցիկ քննությունը կարող էր վարկաբեկել ժամանակակից ժողովրդավարական Ռուսաստանի ազգային անվտանգության շահերը, հատկապես նկատի ունենալով, որ խորհրդային իշխանությունների պատասխանատվությունն այդ հանցագործության համար ճանաչվել էր ամենաբարձր քաղաքական մակարդակով: Դեռ ավելին, պարզվել է, որ գաղտնագրման մասին որոշումը հակասում էր պետական գաղտնի ակտերի 7-րդ բաժնի պահանջներին, որոնք հստակ արգելում են պետական պաշտոնյաների կողմից մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկության գաղտնագրումը: Ցանկացած դեպքում նույնիսկ ենթադրելով, որ տեղի էին ունեցել օրինական անվտանգ ուսումնասիրություններ, դրանք կարող էին կարգավորվել պատշաճ դատավարական միջոցներով, ներառյալ՝ փաստաթղթի սահմանափակ մատչելիությունը (Դատարանի կանոնների 33-րդ կանոն) և, *in extremis*, լուծման անցկացումը դռնփակ նիստում:

Եզրակացություն՝ չի համապատասխանում 38-րդ հոդվածին (չորս ծայն ընդդեմ երեքի):

2-րդ հոդված (դատավարական մոտեցում). Դատարանը կրկին անգամ նշել է, որ պետությունները անօրինական կամ կասկածելի մահվան դեպքերի առիթով արդյունավետ քննություն իրականացնելու հանրահայտ պարտավորություն ունեն: Այդ պարտավորությունը վերածվել էր առանձին և ավտոնոմ պարտականության նույնիսկ այն դեպքում, երբ մահը տեղի էր ունեցել մինչ պատասխանող Պետությունում Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը (վճռական պահ): Սակայն, Դատարանի ժամանակավոր իրավասությունը նման գործերում անսահմանափակ է: Քանի որ մահը տեղի էր ունեցել մինչ վճռական պահը, միայն այդ պահից հետո տեղի ունեցած դատավարական գործողությունները և/կամ անգործությունները կարող են ընգրկվել Դատարանի ժամանակավոր իրավասության շրջանակներում, և պետք է առկա լինի իրական կապ մահվան և Կոնվենցիային պատասխանող Պետության միանալու միջև, որպեսզի դատավարական պարտավորությունն ուժի մեջ մտնի: Հետևաբար, դատավարական քայլերի կարևոր մասը կատարված կլինի կամ պետք է կատարված լինի այդ պահից հետո: Սակայն բացառված չէ, որ որոշակի հանգամանքներում կապը կարող է նաև հիմնված լինի Կոնվենցիայի երաշխիքների և հիմնական արժեքների իրական և արդյունավետ եղանակով պաշտպանվածության անհրաժեշտության վրա¹:

¹Տե՛ս, *Silih v. Slovenia* [GC], թիվ 71463/01, 2009թ. ապրիլի 9, թիվ 118 նախադեպային տեղեկատվության

Սույն գործում որևէ ապացույցի բացակայության պատճառով, որ նրանք կարող էին ինչ որ ձևով փախչել խորհրդային բանտ-ճամբարից, որում նրանք կալանավորված էին, ենթադրվում է, որ դիմումատուների ազգականները մահացել են 1940թ-ի ջարդի ժամանակ: Ռուսաստանը վավերացրել է Կոնվենցիան 1998թ-ի մայիսի 5-ին: Ռուսաստանի կողմից Կոնվենցիայի վավերացման և մահերի միջև 58 տարվա ժամանակահատվածը շատ ավելի երկար էր քան այն ժամանակահատվածները, որոնք նպաստել էին Դատարանի առջև եղած նախկին գործերով 2-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգային պարտավորության կիրառմանը: Ինչպես նաև բացարձակ առումով չափազանց երկար էր նրանց մահվան և Կոնվենցիային Ռուսաստանի միանալու միջև իրական կապ հաստատելու համար: Բացի այդ, պարզվել է, որ Կատինի դեպքերի քննության կարևոր մասն իրականացվել է մինչև վավերացումը, և չկար որևէ նշում, որ որևէ կարևոր դատավարական քայլ իրականացվել էր վավերացումից հետո: Հետևաբար, 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտավորությունների ուժի մեջ մտնելը նպաստողչափանիշը չի բավարարվել:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ էր նաև ուսումնասիրել, թե արդյոք գործի հանգամանքները այնպիսին էին, որ արդարացնեին եզրակացությունն այն մասին, որ մահերի և վավերացման միջև կապը կարող էր հիմնված լինել Կոնվենցիայի երաշխիքների և հիմնական արժեքների արդյունավետ պաշտպանության երաշխավորելու անհրաժեշտության վրա: Կոնվենցիայի հիմնական արժեքների վկայակոչումը նշանակում էր, որ նման կապի ստեղծման

համար քննարկման ենթակա դեպքը պետք է ունենար ավելի մեծ կարևորություն, քան սովորական քրեական հանցագործությունը և հանգեցնեի Կոնվենցիայի հիմքերի ժխտմանը, ինչպես օրինակ ռազմական հանցագործությունները կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները: Այնուամենայնիվ, Պետությունները չունեն հանցագործության փաստի առթիվ քննություն անցկացնելու մշտական պարտականություն, նույնիսկ նման ծանրության հանցագործությունների առթիվ: Ավելին՝ դատավարական պարտավորությունը կարող էր վերականգնվել, եթե նման հանցագործությունների հանգամանքների վերաբերյալ նոր տեղեկությունը դառնար հանրամատչելի վճռական պահից հետո: Արդյո՞ք նոր փաստերը պետք է ի հայտ գային հետվավերացման ժամանակաշրջանում և արդյո՞ք դա պետք է լինեի բավարար ծանրակշիռ և համոզիչ դատավարության նոր փուլ երաշխավորելու համար, որպեսզի Դատարանը ժամանակավոր իրավասություն ունենար համոզվելու, որ պատասխանող Պետությունը իրականացրել է հոդված 2-ով սահմանված իր դատավարական պարտավորությունը դատական նախադեպում ² ձևակերպված սկզբունքներին համապատասխան: Մինչդեռ լեի բանտարկյալների զանգվածային սպանությունը խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից պարունակում էր ռազմական հանցագործության հատկանիշներ, Ռուսաստանի վավերացումից հետո ոչ մի ապացույց ըստ բնույթի կամ

բովանդակության չէր ներկայացվել կամ բացահայտվել, ինչը կարող էր վերականգնել քննության դատավարական պարտավորությունը կամ բարձրացնել նոր կամ ավելի ընդարձակ հիմնախնդիրներ: Հետևաբար, վաղ անցյալի և վերջին հետվավերացման ժամանակաշրջանի միջև կապ հաստատելու որևէ հիմք չկար, և չկար որևէ հանգամանք մահերի և վավերացման միջև կապը արդարացնելու համար: Դատարանը այսպիսով չունեի ժամանակավոր իրավասություն ուսումնասիրելու այս բողոքի էությունը:

Եզրակացություն՝ նախնական առարկությունը հաստատված է (չորս ծայն ընդդեմ՝ երեքի):

3-րդ հոդված: Իշխանությունների 3-րդ հոդվածի ներքո նախատեսված պարտավորությունը և՛ բովանդակությամբ, և՛ ժամանակավոր կիրառելիությամբ տարբեր էր 2-րդ հոդվածով նախատեսված նույն պարտավորությունից: Մինչդեռ երկու պարտավորություններն էլ միջոցի, և ոչ թե արդյունքի պարտավորություններ էին. 2-րդ հոդվածով սահմանված դատավարական պարտավորության ներքո իշխանություններից պահանջվում է ձեռնարկել հատուկ օրինական գործողություն պատասխանատուներին ի հայտ բերելու և պատասխանատվության ենթարկելու համար, մինչդեռ 3-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը ավելի ընդհանուր մարդասիրական բնույթի էր և պահանջում էր նրանցից մարդասիրաբար և կարեկցանքով արձագանքել կորած մարդկանց ազգականների վիճակին: Դատարանը կարող էր գնահատել վերջին պարտավորության պատշաճությունը նույնիսկ այն գործերում, որտեղ իրապես կյանքից

² St' u, *Brecknell v. the United Kindom*, թիվ. 32457/04, 2007թ-ի նոյեմբերի 13, նախադեպային տեղեկատվության թիվ 102:

գրկումը զերծ էր մնացել դատարանի մանրագնին ուսումնասիրությունից դատավարական արգելքի պատճառով, ինչպիսին է ժամանակավոր իրավասության պակասը՝ գանգատը ներկայացված է եղել վերջնական ներպետական որոշումից հետո 6 ամսվա ընթացքում: Հետևաբար, այս գործում դատարանը ուներ իրավասություն ուսումնասիրել ռուսական իշխանությունների արձագանքները և վերաբերմունքը սկսած վավերացման պահից մինչև 2007թ.-ի մայիսի 24-ի (գանգատ թիվ 55508/07) և 2009թ.-ի հունվարի 29-ի (գանգատ թիվ 29520/09) Գերագույն դատարանի որոշումները:

Սակայն, 1940թ.-ին սպանված մարդկանց միայն ամենամոտ ազգականները կարող էին ներկայացնել 3-րդ հոդվածի խախտման տուժողի կարգավիճակ ստանալու պահանջ: Նրանցից էին այդ մարդկանցից մեկի այրին և ինն այլ դիմումատուներ, ովքեր ձևավորման տարիքի երեխաներ էին, երբ նրանց հայրերը անհետացան: Մնացած հինգ դիմումատուները երբեք չեն ունեցել անձնական կապ իրենց անհետացած հայրերի կամ այլ ազգականների հետ, և, հետևաբար, չեն ապրել 3-րդ հոդվածի ներքո հոգեկան տառապանք:

Տաս ամենամոտ ազգականներն են կրել կրկնակի տառապանք. պատերազմում իրենց ազգականներին կորցնելը և ավելի քան 50 տարի իրենց ազգականների մահվան մասին խորհրդային և լեհ խորհրդային իշխանությունների կողմից պատմական փաստերի աղավաղման պատճառով ճշմարտությունն չիմանալը: Հետվավերացման ժամանակաշրջանում իրենց մատչելի չէին քննության նյութերը, նաև նրանք ներգրավված չէին դատավարությանը կամ պաշտոնապես տեղեկացված չէին քննության

արդյունքի մասին: Նրանց ուղղակիորեն արգելված էր ծանոթանալ քննությունը դադարեցնելու մասին 2004թ.-ի որոշման հետ այլազգի լինելու պատճառով:

Այսպիսով, չնայած որ 1990-ական թթ.-ի սկզբներին Կատինի գործի հարուցումը հուսադրել էր դիմումատուներին, այն հետվավերացման ժամանակաշրջանում աստիճանաբար կորավ, երբ նրանք դիմակայեցին պաշտոնական մերժմանը և անտարբերությանը՝ չնայած նրանք ցանկանում էին իմանալ իրենց ընտանիքին մոտ անդամների մահվան հանգամանքները և իրենց հուղարկավորության վայրերը: Նրանց թույլ չէր տրվել մասնակցել դատավարությանն օտարազգի լինելու պատճառով և արգելվել էր ուսումնասիրել հավաքված նյութերը: Նրանք ստացել են կոպիտ և ոչ բովանդակային պատասխաններ ռուսական իշխանությունների կողմից, և դատավարության ընթացքում ձեռքբերված տվյալները եղել են ոչ միայն հակասական և երկիմաստ, այլ նաև պատմական փաստերին հակասող, որոնք, այնուամենայնիվ, պաշտոնապես ճանաչվել էին քաղաքական ամենաբարձր մակարդակով: Ռուսական իշխանությունները չեն տրամադրել դիմումատուներին որևէ պաշտոնական տեղեկություն իրենց ազգականների մահվան հանգամանքների վերաբերյալ կամ չեն ձեռնարկել լուրջ փորձեր իրենց ազգականների հուղարկավորության վայրերը հայտնաբերելու ուղղությամբ, չնայած որ այս պարտավորությունները նախատեսված են 3-րդ հոդվածի ներքո: Բացի այդ, ընդունելով, որ դիմումատուների ազգականները խորհրդային ճամբարներում բանտարկյալներ էին, բայց հայտարարելով, որ իրենց հետագա ճակատագրերը հնարավոր չէր պարզել,

ռուսական դատարանները հերքեցին անմիջապես իրականացված մահապատիժների իսկությունը, որոնք իրականացվել էին Կատինի անտառում և այլ զանգվածային սպանությունների վայրերում: Այդ մոտեցումը հակասում էր Կոնվենցիայի հիմնարար արժեքներին և պետք է սրեր դիմումատուների տառապանքը: Ընդհանուր առմամբ ռուսական իշխանությունները ցուցաբերել են սարսափելի, շարունակական բնույթ կրող և սառնասիրտ անտարբերություն դիմումատուների հոգսերի և անհանգստությունների նկատմամբ, ինչը հավասարվում է անմարդկային վերաբերմունքին:

Եզրակացություն՝ խախտում տալը դիմումատուների նկատմամբ (հինգ ձայն ընդդեմ երկուսի):

41-րդ հոդված. Սյուն գործի բացառիկ հանգամանքների դեպքում 3-րդ հոդվածի խախտման ճանաչումը կազմում է բավարար արդարացի փոխհատուցում:

**Անմարդկային վերաբերմունք
Արժանապատվությունը նվաստացնող
վերաբերմունք**

**Ձերբակալումից հետո դիմումատուի դեմքին
արցունքաբեր գազի բացթողումը.
խախտում**


Ali Güneş v. Turkey

Գանգատ թիվ 9829/07

Վճիռ 10.04.2012 [II բաժանմունք]

Փաստերը. Դիմումատուն մասնակցել է 2004թ.-ի Ստամբուլում տեղի ունեցող Հյուսիսատլանտյան դաշինքի գազաթափողովի հետ կապված ցույցին: Ըստ դիմումատուի՝ ոստիկանության աշխատակիցները իրեն և այլ ցուցարարներին քաջքել են ձեռքերից, կիրառել են արցունքաբեր գազ և ծեծի ենթարկել: Համաձայն կառավարության՝ ցուցարարները պաշտոնական հայտարարությունը ընթերցելուց հետո հրաժարվել էին լքել ցույցի անցկացման տարածքը, և փայտեղով ու քարերով հարձակվել էին ոստիկանության վրա: Արդյունքում ամբոխը ցրելու համար ոստիկանությունն օգտագործել էր արցունքաբեր գազ: Դիմումատուն և մի շարք այլ ցուցարարներ ձերբակալվել են և պահվել մոտավորապես տասնմեկ ժամ մինչև ազատ արձակվելը: Դիմումատուին զննել են երկու բժիշկ, որոնք եզրակացրել են, որ նրա երկու աչքերում նկատվում է հիպերաեմիա: Դեպքը լայնորեն լուսաբանվել էր ազգային մամուլում, և տպագրվել էր դիմումատուի լուսանկարը, որում դիմումատուին պահում են ոստիկանության երկու աշխատակիցներ, որոնցից մեկը նրա աչքերին և դեմքին է բաց թողում արցունքաբեր գազը:

Օրենքը: 3-րդ հոդված (նյութաիրավական ասպեկտ). Դատարանն արդեն ուսումնասիրել է կարգ ու կանոն ապահովելու համար արցունքաբեր գազի օգտագործման հարցը և նշել այն ազդեցությունները, որ այն կարող էր ունենալ: Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) անհանգստություն էր հայտնել կարգ ու կանոն ապահովելու գործունեության համար արցունքաբեր գազի օգտագործման



կապակցությամբ և այդ հարցի առիթով ազգային օրենսդրությունում հստակ ցուցումներ էր տվել: Դատարանը համաձայնվեց ԽԿԿ-ի և ընդգծեց, մասնավորապես, որ չի կարող լինել որևէ արդարացում արցունքաբեր գազի օգտագործման համար իրավապահ մարմինների հսկողության տակ գտնվող անհատի նկատմամբ՝ ինչպես դիմումատուի գործում: Կառավարությունը չէր փորձել արդարացնել դիմումատուի ձերբակալումից հետո նրա նկատմամբ արցունքաբեր գազի օգտագործման փաստը: Այդ ամենը պետք է որ դիմումատուին ենթարկեր անմարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Դատարանը նաև միաձայն գտավ, որ տեղի էր ունեցել 3-րդ հոդվածի դատավարական ասպեկտի խախտում դիմումատուի հայտարարությունների հիման վրա քննություն չիրականացնելու համար:

«Վտանգավոր կալանավոր» ռեժիմի երկարատև կիրառում. խախտում

Piechowicz v. Poland

Գանգատ թիվ 20071/07

Վճիռ 17.4.2012 [IV բաժանմունք]

Փաստեր: 2007թ. հոկտեմբերին դիմումատուն, ով մեղադրվել էր թմրանյութի տրաֆիքինգի և հանցավոր կազմակերպությունն ղեկավարելու մեջ, որակվել էր որպես «վտանգավոր կալանավոր» և նրան տեղավորել էին մի խցում, որը ամբողջովին (այդ թվում՝ սանիտարական միջոցները) շուրջօրյա

վերահսկվում էր փակ տեսախցիկների միջոցով: Ամեն անգամ խցից դուրս գալիս և ներս մտնելիս՝ դիմումատուին ենթարկել են մարմնական զննության, որը փաստացիորեն նշանակում էր, որ նա պետք է մերկ կանգներ ազատագրվման վայրի պահակների առջև, ովքեր պետք է իրականացնեին նաև սրբանու զննություն: Երբ դիմումատուն դուրս էր գալիս խցից, նրան հսկում էր կալանավայրի երկու պահակ, բացի այդ դիմումատուին ստիպում էին ձեռքերին և ոտքերին կրել շղթաներ: Տարբեր առիթներով կարճ ժամանակով այլ բանտարկյալներ են տեղավորել դիմումատուի խցում: Իր ընտանիքի անդամների կողմից այցելությունները նույնպես

սահմանափակված են եղել և իր նամակագրությունը վերահսկվում էր: Դիմումատուին որպես «վտանգավոր կալանավոր» որակելու որոշումը երեք ամիս ընդմիջումներով վերանայվել է և վերջնական որոշում է կայացվել՝ հիմք ընդունելով մեղադրանքների բնույթը: Նրան ազատ են արձակել 2010թ. հուլիսին:

Օրենքը. 3-րդ հոդված (նյութաիրավական կողմ): Չնայած դիմումատուն երբեք չի դատապարտվել որևէ առանձնապես ծանր հանցագործության համար, սակայն նա դատապարտվել էր մի շարք ծանր հանցագործությունների համար, ներառյալ՝ կազմակերպված հանցավոր խմբի անդամ լինելը, և նրա «Ն» ռեժիմի նախնական տեղավորումը կարող է օրինական համարվել: Ինչևէ Դատարանը չի կարող համարել, որ շարունակվող ռեժիմը և այն միջոցների մեծ փաթեթի անկանոն կիրառումը, որոնք համապատասխան մարմինները, հիմնվելով այդ ռեժիմի վրա, պարտավոր էին կիրառել երկու տարի և իննը ամիս, անհրաժեշտ է եղել, որպեսզի ապահովվի կալանավայրի

անվտանգությունը: Դիմումատուն ենթարկվել է միայն սահմանափակ հասարակական մեկուսացման, քանի որ նա կիսել է իր խուցը ժամանակ առ ժամանակ, ունեցել է առօրյա շփում կալանավայրի անձնակազմի հետ, ընտանեկան այցելությունների իրավունք է ունեցել և իրավունք է ունեցել օգտվելու հեռուստատեսությունից և կալանավայրի գրադարանից: Սակայն համապատասխան մարմինները չեն ապահովել «Ն» կալանավորների համապատասխան խթան և բավարար մարդկային շփումը: Նրանք մերժել են դիմումատուի խնդրանքները, որ նա մասնակցի վերապատրաստումների, սեմինարների, կուրսերի և սպորտի, որոնք սովորական բանտարկյալների համար կազմակերպվում էին և թույլ չեն տվել դիմումատուին իր սեփական սպորտային սարքավորումներ ունենա, կամ էլ իր հեռախոսի մեջ ունենա համակարգչային խաղեր կամ CD փլեյեր իր խցում: Ի հավելում, նրա հասարակական մեկուսացման հոգեբանական և էմոցիոնալ հետևանքներն ավելի ուշ վատթարացվեցին այլ, հատուկ անվտանգության միջոցառումների կիրառմամբ, մասնավորապես, այնն է՝ շղթաներ և մերկ զննություն: Դատարանի համար համոզիչ չէ այն փաստը, որ պարբերաբար շղթայելը անհրաժեշտ է եղել ամեն անգամ, երբ դիմումատուն դուրս է եկել իր խցից: Նույն կերպ դիմումատուին մերկ զննության ենթարկելը ներառյալ պարբերաբար իրականացվող սրբանու զննությունը հիմնված չի եղել որևէ կոնկրետ անվտանգության անհրաժեշտության վրա կամ հատուկ կասկածների վրա և չնայած այլ անվտանգության միջոցառումներին, դիմումատուն մշտապես ենթարկվել է

այնպիսի վերահսկողության, ինչպիսին որ CCTV-ն է կամ կալանավայրի պահակները: Չնայած որ մերկ զննությունները անհրաժեշտ են լինում, որպեսզի ապահովեն կալանավորների անվտանգությունը կամ կանխեն անկարգությունները կամ հանցանքը, Դատարանի համոզիչ չի համարում, որ նման պարբերաբար հոգնեցուցիչ և բացառապես անհանգստացնող ստուգումները, որոնք դիմումատուի նկատմամբ ամեն օր կամ երբեմն էլ օրը մի քանի անգամ իրականացվել են, անհրաժեշտ են եղել, որպեսզի կալանավայրում անվտանգություն ապահովեն: Վերջապես, եթե դիմումատուի ենթադրյալ կատարված հանցանքների ծանրության աստիճանը կարող էր արդարացնել նրա նախնական որակումը որպես «վտանգավոր կալանավոր» և բանտարկումը նրան «Ն» ռեժիմով, ապա դա բավական չէր, որպեսզի արդարացներ դրա պարբերականությունը: Հաշվի առնելով կալանավայրի խիստ ռեժիմի ընդհանուր հետևանքները, որոնք իրականացվել են դիմումատուի նկատմամբ՝ Դատարանը համարել է, որ կալանքի տևողությունը և կիրառված միջոցները գերազանցել են կալանավայրի անվտանգության պահանջները և անհրաժեշտ չեն եղել:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Դատարանը նաև համարել է, որ տեղի է ունեցել 5§3 հոդվածի (նախնական կալանքի տևողությունը), 5§4 հոդվածի (կողմերի հավասարության բացակայություն) և 8-րդ հոդվածի (դիմումատուի իր ընտանիքի հետ կապի սահմանափակում և իր նամակագրության հսկողություն) խախտումներ:

41-րդ հոդված. 18,000 Եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Արդյունավետ հետաքննություն_____

Ոստիկանության հետ համագործակցելու պատճառով միևնույն ազատագրկման վայրի բանտարկյալների կողմից կատարված վրեժի առիթով հանցագործություն՝ խախտում

J.L. v. Latvia

Գանգատ թիվ 23893/06

Վճիռ 17.4.2012 [III բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուն պնդում է, որ մեկ այլ բանտարկյալի դեմ իրականացվող հետաքննության ժամանակ ցուցմունք տալուց հետո նա ֆիզիկապես և սեռական բնույթի բռնության է ենթարկվել բանտարկյալների կողմից, երբ նա վերադարձել է Կենտրոնական բանտ, որպեսզի կրի իր պատիժը: Ինչևէ, դիմումատուի պնդմամբ բանտի բժիշկը, ով նրան բժշկական օգնություն է ցույց տվել, մերժել է բժշկական եզրակացություն տալ, իսկ բանտի աշխատակիցը մերժել է նախաձեռնել բռնության վերաբերյալ հետաքննություն: Այնուհետև դիմումատուին տեղափոխել են այլ խուց, իսկ երկու ամիս անց այլ բանտ, որտեղ նա Մարդու իրավունքների պաշտպանին բողոքել է, որ Կենտրոնական բանտում նա ենթարկվել է վատ վերաբերմունքի: Ավելի ուշ Կենտրոնական բանտի ղեկավարությունը Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել է, որ դիմումատուն երբևէ չի բողոքել վատ վերաբերմունքի մասին:

Օրենքը: 3-րդ հոդված (դատավարական կողմ): Անվիճելի էր այն փաստը, որ դիմումատուն համագործակցել է ոստիկանության հետ, երբ վերջինս հետաքննում էր վտանգավոր հանցագործություն, մինչդեռ դիմումատուն ինքն էր գտնվում դատական քննության փուլում: Հետևաբար պետական մարմինները պետք է միջոցներ նախաձեռնեին, որպեսզի ապահովեին դիմումատուի անվտանգությունը, քանի որ նա համագործակցում էր արդարադատության նպատակով: Ինչևէ, որևէ տեղեկություն չկար այն մասին, որ մինչև դիմումատուին բանտ տեղափոխելը իրականացվել է որևէ հիմնավոր ակնկալվող միջոցառում, ինչպիսին է դատախազին և բանտի ղեկավարությանը տեղեկացնել իր համագործակցության վերաբերյալ: Փաստորեն, դիմումատուն վատ վերաբերմունքի վերաբերյալ ունեցել է հիմնավոր գանգատ, որը ներպետական օրենսդրության համաձայն դատախազը և բանտի ղեկավարությունը պարտավոր էին հետաքննել: Բանտի ղեկավարությունը խնդրել էր Կենտրոնական բանտից հետաքննել այդ գործը, բայց դա մի շարք պատճառներով չէր իրականացվել. որևէ բժշկական զննություն չի իրականացվել, դիմումատուից կամ բանտի բժշկից որևէ ցուցմունք չեն վերցրել և դիմումատուն արդյունքների մասին որևէ տեղեկություն չի ստացել: Այդ իսկ պատճառով այդ հետաքննությունը չի կարող համարվել անկախ կամ իրականությունը բացահայտելու նպատակ հետապնդող: Փաստորեն, չնայած որ Դատախազությունը լայն իրավասություններ է ունեցել ազատագրկման վայրերը և սահմանափակ իրավունքներով անձանց գանգատները վերահսկելու և

վերանայելու, որպեսզի պաշտպանի նրանց իրավունքները, բայց այնուամենայնիվ դիմումատուի վատ վերաբերմունքի մասին գանգատները թողնվել են առանց քննության: Վերջապես, Դատարանը նշել է քննիչների, դատախազության, բանտի մարմինների միջև համագործակցության բացակայության մասին՝ այն ազատագրկվածների հնարավոր վատ վերաբերմունքի կանխման տեսանկյունից, ովքեր օգնում են նրանց բացահայտելու քրեական հանցագործությունները, քանի որ նրանք հատկապես խոցելի են և առկա է վտանգ, որ նրանք կարող են ենթարկվել բռնությունների: Դիմումատուի գործով պետական մարմինների գործունեությունը և այն մոտեցումը, որը դրսևորվել է ներպետական օրենսդրությունը կիրառելիս դիմումատուին վատ վերաբերմունքի ենթարկելու վերաբերյալ գանգատի ուղղությամբ, չեն համապատասխանել Պետության դատավարական պարտավորությանը 3-րդ հոդվածի ներքո:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

41-րդ հոդված: 10,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում. նյութական վնասի վերաբերյալ գանգատը մերժվել է:

(Տե՛ս նաև *Ռոդիկը և ուրիշներն ընդդեմ Բոսնիայի և Հերցեգովինայի*, թիվ 22893/05, 27 մայիս, 2008թ., նախադեպային տեղեկատու թիվ 108, և *Պրեմինինին ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 44973/04, 10 փետրվար 2011թ., նախադեպային տեղեկատու թիվ 138)

Հանձնում

ԱՄՆ-ի սուպեր-մաքս բանտում ազատագրկման պայմանները՝ հանձնումը չի հանգեցնի խախտման

Babar Ahmad and Others v. the United Kingdom

Գանգատ թիվ 24027/07

Վճիռ 10.4.2012 [IV բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուներին Միացյալ Նահանգներում վերագրել են ահաբեկչության վերաբերյալ տարատեսակ մեղադրանքներ, որը պահանջել է նրանց հանձնումը: Դիմումատուները գանգատ են ներկայացրել Եվրոպական Դատարան: Նրանք մտավախություն ունեին, որ իրենց ազատագրկումը կանցկացնեն ԱՄՆ-ի ADX Ֆլորենսսիայում, որը սուպեր-մաքս բանտ էր, որտեղ նրանց նկատմամբ կկիրառվեր հատուկ վարչական միջոցների և որտեղ նրանք կրելու էին ցմահ առանց վերանայման պայմանների ազատագրկում:

Օրենքը: 3-րդ հոդված:

(ա) *ADX Ֆլորենսսիայում բանտի պայմանները:* Չնայած ADX Ֆլորենսսիայում դիմումատուների ազատագրկումը անխուսափելի չէր լինի, Կառավարությունը ընդունել է, որ եթե նրանց հանձնեին և դատապարտեին ԱՄՆ-ում, իրական վտանգ կար, որ դիմումատուների ազատագրկվեին այդ բանտում: Անվիճելի էր այն փաստը, որ ADX Ֆլորենսսիայում ֆիզիկական պայմանները, այն է՝ խցերի չափը, լուսավորությունը և սանիտարական միջոցները, համապատասխանել են 3-րդ հոդվածով սահմանված պահանջներին: Ինչևէ, դիմումատուները բողոքել են իրենց դատավարական երաշխիքների վերաբերյալ մինչև իրենց տեղավորելը այդ բանտում,

ինչպես նաև ADX-ի սահմանափակ պայմանների և մարդկային շփումների բացակայության վերաբերյալ: Ինչ վերաբերում է առաջին գանգատին՝ ԱՄՆ պետական մարմինները ցույց են տվել, որ ոչ բոլոր բանտարկյալներն են, ովքեր դատապարտվել են միջազգային ահաբեկչության հանցանքի համար, իրենց ազատազրկումը կրել էին ADX Ֆլորենսիայում:

Փոխարենը՝ Քրեակատարողական հիմնարկների Դաշնային Բյուրոն կարծես, թե կիրառում է ընդունելի և ռացիոնալ չափանիշներ, երբ որոշում է որևէ բանտարկյալի այդ հաստատություն տեղափոխելու հարցը: Ավելին, այդ տեղափոխումներից առաջ տեղի էին ունենում դատախոսներ, և բանտարկյալները դաշնային դատարաններ բողոք ներկայացնելու հնարավորություն ունեին համաձայն ԱՄՆ Սահմանադրության 14-րդ փոփոխության համապատասխան գործընթացի: Ինչ վերաբերում է երկրորդ գանգատին, չնայած որ դիմումատուները ֆիզիկապես վտանգ չէին ներկայացնում, բայց ԱՄՆ պետական մարմինների որոշումը արդարացի կհամարվեր, որով նրանք դիմումատուների համարում էին անվտանգության համար լուրջ վտանգ ներկայացնող և հետևաբար պետական մարմինների այն քայլը, որով նրանք կարող էին սահմանափակել արտաքին աշխարհի հետ դիմումատուների շփումը կհամարվեր արդարացի: Այնուհետև հստակ էր, որ բանտարկյալների անվտանգության դասակարգման հետ կապված գործընթացների վերանայումը բավականին պատշաճորեն էր իրականացվում: Անմիճելի էր այն, որ ADX Ֆլորենսիայի պայմանները, հատկապես հատուկ անվտանգության

մասում, բավականին սահմանափակ էր, քանի որ նրանք նպատակ են ունեցել կանխելու բոլոր ֆիզիկական շփումները բանտարկյալների և անձնակազմի միջև: Ինչևէ, խցի ներսում բավականին ընդարձակ միջոցներ կար՝ հեռուստացույցի և ռադիոյի ալիքների, հաճախակի թերթերի, գրքերի, հոբբի և արհեստների գործիքների և ուսուցման ծրագրերի տեսքով: Իրականում այն միջոցառումները և ծառայությունները, որոնք տրամադրվում էին ավելի էին քան առկա էր Եվրոպայի շատ բանտերում: Ավելին, անգամ բանտարկյալները, որոնք գտնվում էին հատուկ վարչական հսկողության ներքո, իրավունք ունեին պարբերաբար կատարել հեռախոսային զանգեր, սոցիալական այցելություններից և իրենց ընտանիքների հետ շփումներից: Խցերում գտնվելու ժամանակ բանտարկյալները կարող էին շփվել այլ բանտարկյալների հետ միայն օդափոխման համակարգի միջոցով, իսկ հանգստի համար հատկացված ժամանակահատվածում բանտարկյալները հնարավորություն ունեին շփվելու առանց արգելքների: Բոլոր այս փաստերը ապացուցում են, որ ADX-ի բանտարկյալների մեկուսացումը մասնակի է եղել և կիրառվել է ըստ անհրաժեշտության:

Եզրակացություն՝ խախտում չկա (միաձայն)

(բ) *Հնարավոր ցմահ ազատազրկում:* Հստակ չի եղել այն փաստը, որ եթե դիմումատուներին հանձնեին, նրանց կդատապարտեին կամ որ նրանց նկատմամբ նշանակվելու էր ըստ հայեցողության ցմահ ազատազրկում: Ինչևէ, եթե անգամ նման ազատազրկման որոշում կայացվեր, հաշվի առնելով դիմումատուների կատարած հանցանքների ծանրությունը, Դատարանը չի

համարել, որ դրանք չափազանց անհամաչափ են եղել: Ավելին, համաձայն Դատարանի նախկին գործերում ըստ հայեցողության ցմահ ազատազրկման վերաբերյալ կատարած ուսումնասիրությունների՝ 3-րդ հոդվածի հետ կապված հարցը կարող է ծագել միայն եթե ներկայացվի. (i) որ դիմումատուի շարունակական ազատազրկումը այլևս իրավական պատժիչ նպատակ չի հետապնդում և (ii) ազատազրկումը *de facto* և *de jure* հնարավոր չէր կրճատել: Քանի որ դիմումատուներից որևէ մեկը դեռ չէր դատապարտվել կամ նրանք դեռ չէին սկսել կրել ազատազրկումը, Դատարանը համարել է, որ նրանք չեն ապացուցել, որ հանձնման դեպքում, դիմումատուների ԱՄՆ-ում ազատազրկումը իրավական պատժի նպատակ չի հետապնդի: Այնուհետև հստակ չէր, թե եթե դիմումատուները երբևիցե հասնեին այդ փուլին, ԱՄՆ պետական մարմինները կիրառվեին կիրառել այն միջոցները, որը գոյություն ուներ իրենց համակարգում, միայն որպեսզի կրճատեն դիմումատուների համար սահմանված ազատազրկված ժամանակահատվածը:

Եզրակացություն՝ խախտում չկա (միաձայն):

Դատարանը որոշել է հետաձգել երկրորդ դիմումատուի գանգատների վերաբերյալ քննությունը, ով տառապում է շիզոֆրենիայով և որոշել է քննել այդ գործը ավելի ուշ նոր թվով գանգատի ներքո:

(Տե՛ս նաև *Ռամիրես Սանչեսն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ], թիվ 59450/00, 4 հուլիս 2006թ., նախադեպային տեղեկատու թիվ 88, և *Հարկինսը և Եդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 9146/07 և 32650/07, 17 հունվար 2012թ., նախադեպային տեղեկատու թիվ 148.)

ՀՈԴՎԱԾ 6 6§1 (քաղաքացիական)

Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ
Բանտային խորհրդի բանտարկյալին ժամանակավոր ազատ արձակելու մասին պահանջի շարունակական մերժումը՝ առանց վարչական դատարաններ բողոքարկելու իրավունքի՝ խախտում չկա

Boulois v. Luxembourg

Գանգատ թիվ 37575/04

Վճիռ 3.4.2012 [ՄԴ]

Փաստերը: Դիմումատուն դատապարտվել է տասնհինգ տարվա ազատազրկման: 2003թ. և 2006 թվականների ընթացքում դիմումատուն վեց պահանջ է ներկայացրել ժամանակավոր բացակայելու մասին («բանտից դուրս գալ») մասնավորապես այն հիմքերով, որ նա ցանկացել է վարչական հանձնարարություններ կատարել և որակավորման բարձրացման համար մասնակցել դասընթացների: Դիմումատուի բոլոր պահանջները ազատազրկման վայրի խորհրդի կողմից մերժվել են: Դիմումատուն առաջին երկու մերժումների կապակցությամբ հայց է ներկայացրել Վարչական դատարան, որը մերժել է քննության առնել հայցը: Այդ վճիռը կայացվել է Բարձրագույն Վարչական Դատարանի կողմից:

2010թ. դեկտեմբերի 14-ի վճռով (տե՛ս նախադեպային տեղեկատու թիվ 136) Դատարանի Պալատը չորս ձայն ընդդեմ երեքի որոշել է, որ տեղի է ունեցել 6§1 հոդվածի խախտում, այն հիմքով, որ

յուրաքանչյուր որոշում ըստ էության հայցի վերաբերյալ անվավեր է դարձրել բանտային խորհրդի որոշումների վերաբերյալ վարչական դատարանների վերանայման հետևանքները: Ավելին, գործող օրենսդրությամբ չի նախատեսվել բանտարկյալների համար որևէ այլ իրավական պաշտպանության միջոց:

Օրենքը: 6§1 հոդված: Կոնվենցիայի 6§1 հոդվածը այս դեպքում կիրառելի չէ որպես քրեական հասկացություն, քանի որ ազատագրկման վայրի համակարգի հետ կապված գործընթացները չեն ընկնում «քրեական հանցանք»-ի սահմանման տակ: Այդ իսկ պատճառով Դատարանը պետք է որոշեր, թե արդյոք դիմումատուն ունեցել է «քաղաքացիական իրավունք», որպեսզի որոշեր, թե 6§1 հոդվածով երաշխավորված դատավարական երաշխիքները կիրառելի են եղել բանտից ժամանակավոր դուրս գալու դիմումատուի պահանջներին: Առաջին հերթին Դատարանը պետք է որոշեր, թե արդյոք դիմումատուն ունեցել է բանտից դուրս գալու «իրավունք»: Ըստ ներպետական օրենսդրության՝ բանտից դուրս գալը որակվել է որպես թույլտվություն օրվա մի մասով կամ քսանչորս ժամ կտրվածքով: Սա «առավելություն» է եղել, որը «[կարող] էր շնորհվել» որոշակի հանգամանքներում գտնվող բանտարկյալներին: Դա հստակորեն օրենսդրի նախաձեռնությունն էր՝ առավելություն ստեղծել, որի վերաբերյալ որևէ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի սահմանվել: Համապատասխան մարմիններն իրավասությունների շրջանակներում իրենց հայեցողությամբ էին որոշում թույլ տալ բանտարկյալներին դուրս գալ, թե՛ ոչ, անգամ

այն դեպքերում, երբ բանտարկյալներն ունեցել են դուրս գալու համար բոլոր պահանջվող չափանիշները: Ինչ վերաբերում է ներպետական դատարանների կողմից տրված օրենսդրության մեկնաբանմանը, վարչական դատարանները մերժել են քննել դիմումատուի հայցը, որը վերաբերում էր գործի դատավարական կարգով վերանայմանը: Հետևաբար դիմումատուն չէր կարող բողոք բարձրացնել այնպիսի հիմքով, որով օրինակ պահանջեր ձեռք բերել «իրավունք», որը կճանաչվեր ներպետական իրավական համակարգում:

Ավելին, չնայած Դատարանը ճանաչել է ազատագրկման դատապարտված անձանց զարգացող սոցիալական վերաինտեգրման քաղաքականության իրավաչափ նպատակը, ոչ Կոնվենցիան, ոչ դրան կից Արձանագրությունները չեն սահմանել ազատագրկման վայրից դուրս գալու իրավունք: Նույն մոտեցումը կիրառվում է նաև միջազգային իրավունքի հնարավոր սկզբունքների վերաբերյալ: Վերջապես, բանտից դուրս գալու և դրա հետ կապված միջոցառումների շնորհման վերաբերյալ անդամ Պետությունների միջև ևս որևէ համաձայնություն գոյություն չի ունեցել: Ամեն դեպքում պատասխանող Պետությունը բոլորովին անտարբեր չէր բանտարկյալներին տեղափոխելու հետ կապված խնդիրներին, ինչպես որ ապացուցվել է բանտից դուրս գալու հնարավորությամբ և օրենսդրական փոփոխությամբ, որը ընդունվելու փուլում էր գտնվում և որը վերաբերում էր պատիժը կրելուն:

Հաշվի առնելով այդ ամենը՝ դիմումատուի գանգատը չի վերաբերել «իրավունք»-ին, որը սահմանվում էր Լյուքսեմբուրգի օրենքով կամ

Կոնվենցիայով: Հետևաբար 6-րդ հոդվածը կիրառելի չէր:

Եզրակացություն՝ խախտում չկա (տասնհինգ ձայն ընդդեմ երկուսի):

Արդար դատաքննություն

Հետմահու մեղքի ճանաչում, որը ներառում է ժառանգների կողմից պարտավորություն՝ խախտում

Lagardère v. France

Գանգատ թիվ 18851/07

Վճիռ 12.4.2012 [V բաժանմունք]

Փաստերը: 1992թ. դեկտեմբերին մի ընկերություն հայց է ներկայացնում Ժան-Լյուկ Լագադերեի, այսինքն՝ դիմումատուի հոր դեմ ձեռնարկության ակտիվների անօրինական ձեռքբերման համար և դիմում է որպեսզի ներգրավվի քրեական գործի վարույթին որպես քաղաքացիական կողմ: 1999թ. հուլիսին հորը կանչում են քրեական դատարան, որը և քննությունը համարում է վաղեմության ժամկետն անցած: 2002թ. հունվարին Փարիզի Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողնում այդ վճռի բոլոր դրույթները: Կազմակերպությունը վճռաբեկ բողոք է ներկայացնում: 2003թ. մարտին մահանում է Ժան-Լյուկ Լագադերե: 2003թ. հոկտեմբերին, երբ քննությունը կարճվել էր մեղադրյալի մահվան հետևանքով, Վճռաբեկ դատարանը կարճեց և չեղյալ համարեց Փարիզի Վերաքննիչ դատարանի վճռի քաղաքացիական դրույթները և սահմանեց ավելի ուշ ժամկետ, որով սկսվեց ժամանակի հոսքը՝ վաղեմության ժամկետը հաշվարկելու նպատակներով: Վերսալի վերաքննիչ

դատարանը, որին գործը ուղարկված էր նոր քննության, գտավ, որ ձեռնարկության ակտիվների անօրինական ձեռքբերման էական տարրերը սահմանված են եղել և կարգադրեց Ժան-Լյուկ Լագադերեի ժառանգներին վճարել մոտ տասնչորս միլիոն Եվրո քաղաքացիական կողմին: Դիմումատուն դիմում է Վճռաբեկ դատարան, փաստելով, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, քանի որ Քրեական դատարանը իրավասություն չի ունեցել հայցը քննելու իր հոր մահից հետո: Վճռաբեկ դատարանը մերժում է բողոքը:

Օրենքը: 6§1 հոդված: Դիմումատուն բողոքել է, որ նրան կարգադրել են որպես իր հոր իրավահաջորդ վնասներ փոխհատուցել, քանի որ իր հայրը քրեական հանցանք էր գործել, չնայած որ իր հոր մեղավորությունը մինչև իր մահը դեռ հաստատված չէր, իսկ Վերսալի Վերաքննիչ դատարանը, որին գործն ուղարկվել էր քննելու, նրան մեղավոր էր ճանաչել միայն հետմահու:

Նախ և առաջ, Դատարանը նշել է, որ կողմերի միջև քննարկումը հիմնականում եղել է այն հարցի շուրջ, թե արդյոք քրեական գործերով ըստ էության որոշումը կայացվել է կայացվել է այն ժամանակ, երբ Ժան-Լյուկ Լագադերեը դեռ ողջ էր, որը հանդիսանում էր կարևոր պայման, որով, ըստ ֆրանսիական օրենսդրության, քրեական դատարանը պետք է առաջնորդվեր քաղաքացիական գործեր քննելիս: Այդ իսկ պատճառով Դատարանը պետք է որոշեր թե ընդհանուր առմամբ գործի քննությունը արդար է եղել, թե՛ ոչ: Մինչև դիմումատուի հոր մահը Քրեական դատարանը և Փարիզի Վերաքննիչ դատարանը քրեական քննությունը վաղեմության ժամկետն անցած են համարել:

Ինչևէ, երբ Վերսալի Վերաքննիչ դատարանը հստակ նշել էր, որ քրեական գործողությունները դադարեցվել են այն անձի մահվան փաստով, ում դեմ բողոք է ներկայացվել, համարել է, որ երկու ավելի վաղ դատաքննության արդյունքում կայացված դատարանի որոշումները այն մասին, որ քննության վաղեմության ժամկետն անցած է եղել (որոշումները, որոնք կայացվել են դիմումատուի հոր մահվանից հետո) վերաբերել են գործի ըստ էության քննությանը և թույլ են տվել շարունակելու քաղաքացիական գործի քննությունը: Վերսալի Վերաքննիչ դատարանը հետևաբար սահմանել է, որ նա ունեցել է իրավասություն որոշելու, թե ձեռնարկության ակտիվների անօրինական ձեռք բերման հանցանքի տարրերը հաստատված են եղել մեղադրյալի նկատմամբ: Դատարանը հաստատել էր հանցանքի տարրերը և ժան-Լյուկ Լագադդեդին ճանաչել մեղավոր՝ հիմնվելով իր կատարած գործողությունների վրա: Դատարանը այդ որոշումը սահմանվել է Վճռաբեկ դատարանի վճռի գործնական դրույթներում: Հոր մահից հետո այն որոշման մեջ, որտեղ սահմանվում էր կատարված հանցանքի տարրերը Վերսալի Վերաքննիչ դատարանը պարզ տերմիններով համարել է դիմումատուի հորը մեղավոր՝ հետմահու: Մեղքի ճանաչման այդ առաջին որոշումը կայացվել էր այդ դատարանի կողմից, երբ գործը ուղարկվել էր կրկին քննության՝ չհարգելով մրցակցության սկզբունքը կամ պաշտպանյալի իրավունքները, քանի որ մեղադրյալը երկու տարի առաջ մահացել էր: Այդ կապակցությամբ Եվրոպական Դատարանը տարբեր առիթներով նշել է, որ արդարադատության մերժումը ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ մեղադրյալը *in*

absentia համապատասխանաբար ի վիճակի չի եղել մասնակցելու դատաքննությանը, երբ որոշվել է ըստ էության մեղադրանքի հարցը՝ ըստ գործի իրավական և փաստացի կողմերի: Որևէ կասկած չի եղել, որ այս օրենսդրությունը կիրառվել է ընդհանուր առմամբ այն գործերի նկատմամբ, որտեղ մեղքը հետմահու է ճանաչվել: Դատարանը նշել է, որ դիմումատուի՝ որպես իր հոր իրավահաջորդի, քաղաքացիական իրավունքը ներառել է հոր հետմահու մեղադրանքի ուղղակի արդյունքը: Այդ իսկ պատճառով դիմումատուն իրավասու չի եղել իրավաչափորեն վիճարկելու այն գումարները, որոնք նրան կարգադրված էր վճարել: Այս պայմաններում դիմումատուն ի վիճակի չի եղել պաշտպանելու իր գործը՝ պահպանելով արդար դատաքննության սկզբունքը, քանի որ որևէ հնարավորություն չի ունեցել վիճարկելու իր դեմ բերված բողոքի փաստերը, որը հիմնված է եղել իր հոր հետմահու մեղադրանքի վրա, և որը դիմումատուին դրել է ոչ նպաստավոր իրավիճակի մեջ հակառակ կողմի համեմատ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Հոդված 6§2: Դիմումատուին կարգադրել են քաղաքացիական գործով վնասներ հատուցել ոչ նրա քրեական պարտավորության շրջանակներում, այլ տուժողների կրած վնասների փոխհատուցման համար: Ակնհայտորեն ոչ նպատակը, ոչ փոխհատուցման չափը տվյալ միջոցները 6§2 հոդվածի իմաստով չեն համարել քրեական մեղադրանք: Այս կապակցությամբ վնասների հետ կապված գանգատը դիմումատուի հոր դեմ չի առաջացրել նոր «քրեական մեղադրանք»:

Մեղադրյալը մահացել է մինչ «դատարանի» կողմից նրա մեղքը օրինականորեն ճանաչվելը, այսպիսով մինչ դիմումատուի հոր մահը նա անմեղ է համարվել: Չնայած քաղաքացիական գործը ընդունված էր քննել քրեական գործի շրջանակներում՝ Վերսալի Վերաքննիչ դատարանը այնուամենայնիվ որոշել է մեղադրյալի մեղքը ավելի ուշ ճանաչել և դրա դրական կողմն այն էր, որ հետո դատարանը կարողանար կիրառել այդ քաղաքացիական գործում և կարգադրեր դիմումատուին փոխհատուցում տալ: Քրեական և քաղաքացիական գործերի միջև այդ կապը թվում էր, թե արդարացնում է քաղաքացիական գործերով 6§2 հոդվածի շրջանակները: Հետևաբար և կիրառված լեզվի տեսանկյունից, և տրված պատճառաբանության տեսանկյունից Վերսալի Վերաքննիչ դատարանը դիմումատուի հորը մեղավոր է ճանաչել իր դեմ ներկայացրած մեղադրանքներով, չնայած որ քննությունը դադարել է վերջինիս մահվամբ և իր կենդանության օրոք որևէ դատարան նրան մեղավոր չէր ճանաչել: Այդ իսկ պատճառով խախտվել է նրա ամեղության կանխավարկածի իրավունքը:

Եզրակացություն՝ խախտում (հինգ ծայն ընդդեմ երկուսի):

41-րդ հոդված: 10,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Նյութական վնասի մասով փոխհատուցումը մերժվել է:

Հոդված 6§1 (քաղաքացիական) (քրեական)
Արդար դատաքննություն

**Մեղադրյալի այրիից գույքի բռնագրավումը՝
խախտում չկա**

Silickienė v. Lithuania

Գանգատ թիվ 20496/02

Վճիռ 10.4.2012 [II բաժանմունք]

(Տե՛ս ստորև Հոդված 6 § 2, էջ 16)

Հոդված 6§1 (քրեական)

Քրեական մեղադրանքի որոշման հարց
Արդար դատաքննություն

**Արդար դատաքննության բացակայության
մասին գանգատ ոստիկանության
արձանագրությունը անվավեր ճանաչելու
վերաբերյալ համաձայն օրենսդրական
փոփոխության՝ խախտում չկա**

Nicoleta Gheorghe v. Romania

Գանգատ թիվ 23470/05

Վճիռ 3.4.2012 [III բաժանմունք]

Փաստերը: 2004թ. մայիսին ոստիկանության կազմած արձանագրության հիման վրա դիմումատուին կարգադրել են տուգանք վճարել, քանի որ նա խախտել է նրա հարևանությամբ գտնվող բնակարանների բնակիչների խաղաղությունը: Դիմումատուն ոստիկանության արձանագրությունը վիճարկել է առաջին ատյանի դատարանում, որը նրա գանգատները համարել է անհիմն: Դիմումատուն ապա վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ վճռի դեմ, որը ճանաչվել է անհիմն համայնքային դատարանի կողմից:

Օրենքը: հոդված 6§1:

(ա) *Ընդունելիությունը* – Կոնվենցիայի 35§3
 (բ) հոդվածով սահմանված նոր ընդունելիության չափանիշը կիրառելի չէր, քանի որ մարդու իրավունքների հարգանքը պահաջում էր, որ դիմումի քննությունը շարունակվեր անկախ տուգանքի չափից (մոտավորապես 17 եվրո), որը և հիմք է հանդիսացել գանգատի համար: Այդ կապակցությամբ դիմումում բարձրացվել է քրեական կողմի 6-րդ հոդվածի կիրառելիությունը, որոնք վերաբերում են խաղաղության խախտման մի շարք ոչ էական քրեական հանցանքների: Սա առաջին գործն է, որը Դատարանին կոչ է արվել քննելու, ներպետական օրենսդրությունում և Դատարանի պրակտիկայում համապատասխան փոփոխությունների կատարումից հետո, որը հակասել է 6-րդ հոդվածին այն հիմքով, որ նրանք համապատասխան երաշխիքներ չեն ապահովել անմեղության կանխավարկածի մասով: Այս սկզբունքի վերաբերյալ Դատարանի մոտեցումը այն երաշխիքների սահմանների վերաբերյալ, որոնք պետք է ապահովեն ներպետական դատարաններում այն անձանց համար, ովքեր խաղաղության հետ կապված մանր հանցանքներ են կատարել, ներպետական դատարանների համար ուղեցույց կարող է ծառայել: Ինչ վերաբերում է ընդունելիությանը, ապա դիմումատուի խախտած կանոնադրական դրույթների ընդհանուր բնույթը և զսպիչ միջոցը և առաջարկված տուգանքի պատժիչ նպատակը բավական են եղել, որպեսզի ցույց տրվի, որ քննարկվող հանցանքը 6-րդ հոդվածի իմաստով եղել է քրեական բնույթի, որը և հետևաբար կիրառելի է եղել:

(բ) *Ըստ էության քննությունը*: Որևէ ապացույց չկար, որ այն դատարանները, որտեղ

դիմումատուն վիճարկել է ոստիկանության արձանագրությունը, կանխավ գաղափար են ունեցել դիմումատուի մեղքի վերաբերյալ անկախ այն փաստից, որ առաջին ատյանի դատարանի վճռով պարզ նշվել է, որ դիմումատուից ակնկալել են, որ նա ոստիկանության աշխատակցի ներկայացրած փաստերի դեմ հակափաստարկ կներկայացնի: Մանր հանցանքների վերաբերյալ օրենսդրությունը կիրառվել է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հետ համակցված, որը ապացույցների վերաբերյալ, այն սկզբունքն էր կիրառում, որ ապացուցման պարտավորությունը պետք է կրեր այն անձը, ով վեճ էր ներկայացնում: Այդ կապակցությամբ Դատարանը նշել է, որ փաստերի կամ օրենքի կանխավարկածը, որը գործում է յուրաքանչյուր իրավական համակարգում և որ, մինչ Կոնվենցիան դրանք սկզբունքորեն չի արգելում, բայց քրեական իրավունքի հետ կապված պահանջում է Կողմ Պետություններին որոշակի սահմաններ պահպանել:

Ինչ վերաբերում է քննարկվող հարցի լրջության աստիճանին, ապա, հիմք ընդունելով մանր հանցանքների վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները, որոնք կատարվել են դիմումատուի կողմից սկսած քննության ժամանակ, դիմումատուի նկատմամբ միայն տուգանք են նշանակել, որը անգամ այն չվճարելու դեպքում, չէր կարող վերածվել կալանավորման:

Ինչ վերաբերում է դիմումատուի պաշտպանության իրավունքին, ապա դիմումատուն գործի նյութերին որպես ապացույց միայն փաստաթղթեր է ավելացրել և չի պահանջել, որ որևէ անձ ներկայանա վկայություն տալու համար, չնայած որ այդ

տարբերակը մատչելի է եղել նրա համար: Հոդված 6-ը չի արգելում անձանց ազատ օգտվել այնտեղ սահմանված երաշխիքներից: Ինչևէ, եթե վերապահում է արվում այս հոդվածից, այն պետք է միանշանակ լինի և չպետք է հակասի կարևոր հանրային շահին: Ներպետական դատարաններում նիստերի ժամանակ հայտարարելով, որ դիմումատուն ցանկություն չունի ներկայացնել այլ ապացույցներ, դիմումատուն գիտակցաբար իրեն վտանգի է ենթարկել դատապարտվելու այն ապացույցների շրջանակներում, որոնք ներկայացված են եղել գործի նյութերում, ներառյալ՝ ոստիկանության արձանագրությունը, որը նա ինքն է ներկայացրել առաջին ատյանի դատարանում և որի պատճառաբանության կապակցությամբ եղել են հակասող կանխավարկածներ:

Ավելին, ներպետական դատարանները, որոնք քննել են ոստիկանության դեմ դիմումատուի հայցը, հիմնվել են ամբողջական օրենսդրության վրա և կարող էին չեղյալ համարել այդ արձանագրությունը՝ համարելով այն անվավեր կամ անհիմն: Կամայականության կամ արդարության վերաբերյալ որևէ բան չկար առաջարկելու: Այն փաստը, որ դատարանները, հիմնվելով պատճառաբանված որոշման վրա, սահմանել են անվավերության հիմքերը, հիմնված են եղել դիմումատուի ներկայացրած փաստերի վրա և արձանագրությունը անվավեր չճանաչելու դատարանների որոշումը, հիմք չէր, որպեսզի դատաքննության արդարության վրա կասկած հարուցի կամ ավելի հստակ՝ կասկած հարուցի դատարանների կողմից կիրառված անմեղության կանխավարկածի սկզբունքի վրա:

Եզրակացություն՝ խախտում չկա (միաձայն):

Հոդված 6§2

Անմեղության կանխավարկած
Մեղադրյալի այրի կնոջ գույքի
բռնագրավում՝ չկա խախտում

Silickienė v. Lithuania

Գանգատ թիվ 20496/02

Վճիռ 10.4.2012 [II բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուի ամուսնուն՝ Մ.Ս.-ին, ով հանդիսանում էր հարկային գործերով ոստիկանության բարձրաստիճան սպա, մեղադրանք է ներկայացվել մաքսանենգության կատարման համար հանցավոր խումբ ձևավորելու և այն ղեկավարելու մեջ: 2000 թվականին իշխանությունները Մ.Ս.-ին, իր մորը և դիմումատուին պատկանող որոշ ակտիվներ սառեցրել են, քանի որ իրենք կասկածել են, որ այդ միջոցները ձեռք էին բերվել հանցավոր գործունեության հետևանքով: Մ.Ս.-ի մայրը բողոք է բերել և իր ակտիվների որոշ մասը ազատել են: Դիմումատուն, այնուամենայնիվ, որևէ բողոք չի բերել: 2003 թվականին Մ.Ս.-ն ինքնասպանություն է գործել և դիմումատուն ու Մ.Ս.-ի մայրը պահանջել են քրեական վարույթի շարունակություն՝ նրա արդարացմանը հասնելու նպատակով: Քանի որ նրանք մտահոգ էին Մ.Ս.-ի կողմից ձևավորած հանցավոր խմբի գործունեությամբ, դատարանը որոշում է կայացրել շարունակել վարույթը և նշանակել է փաստաբան՝ նրա շահերը պաշտպանելու համար: 2004 թվականին դատարանը որոշել է, որ չկար որևէ հիմք Մ.Ս.-ի արդարացման համար,

քանի որ առկա ապացույցներով հաստատվում էր նրա մեղքը հանցագործությունների կատարման մեջ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով նրա մահը՝ դատարանը դադարեցրել է նրա դեմ քրեական վարույթի ընթացքը՝ միևնույն ժամանակ դատապարտելով իր հետ միևնույն գործով մեղադրվող անձանց: Դատարանը նաև կարգադրել է որոշ գույքի բռնագրավում՝ ներառյալ դիմումատուի բնակարանը և հեռահաղորդակցման ընկերությունում նրան պատկանող բաժնեմասերը՝ այն հիմքով, որ դրանք ձեռք են բերվել որպես Մ.Ս.-ի հանցավոր գործունեության արդյունք: Այդ դատավճռի դեմ բերված բողոքները մերժվել են, *inter alia*, այն հիմքով, որ դիմումատուի սեփականությունը ձեռք է բերվել հանցավոր խմբի գործունեության արդյունքում, ինչի մասին դիմումատուն անկասկած տեղյակ է եղել:

Օրենքը. 6 § 1. Դիմումատուն գանգատվել է, որ նա չէր կարող պաշտպանել իր իրավունքները իր ամուսնու դեմ հարուցված քրեական վարույթի ընթացքում, որը հանգեցրել է իր սեփականության բռնագրավմանը: Այսպիսով, Դատարանը, հաշվի առնելով այդ միջոցի խստությունը, պետք է որոշի, թե արդյոք ներպետական իրավական համակարգը տվել է նրան գործը դատարաններում քննելու բավարար հնարավորություն: Չնայած համապատասխանում է իրականությանը այն, որ դիմումատուն չի հանդիսացել հանցավոր խմբի դեմ քրեական վարույթի կողմ՝ խնդրո առարկա հանդիսացող համակարգը առանց երաշխիքների չի եղել: Առաջին հերթին, դիմումատուն կարող էր ձգտել հասնել 2000 թվականին սկզբնական բռնագրավման վերաբերյալ դատական վերանայման: Եթե

նա որոշեր ցուցմունք տալ քրեական վարույթի ընթացքում, նա կարող էր նաև բացատրել իր գույքի ծագումը, սակայն նա չի օգտվել նաև այդ հնարավորությունից: Ի վերջո, Մ.Ս.-ի մահից հետո դատարանը նշանակել է փաստաբան՝ քրեական վարույթում Մ.Ս.-ի շահերի պաշտպանության համար, և, առաջին ատյանի դատավճռից հետո, նրա ընտանիքը վարձել էր մեկ այլ փաստաբան՝ նրանց շահերը (ներառյալ՝ դիմումատուի գույքային շահերը) պաշտպանելու համար: Նման հանգամանքներում չնայած, որ սկզբունքորեն անձինք, ում գույքը բռնագրավվել էր, պետք է պաշտոնապես ճանաչվեին այդպիսի միջոցառումներին հանգեցնող վարույթի կողմ, Դատարանը ընդունում է, որ դիմումատուի գործի առանձնակի հանգամանքներում լիտվական իշխանությունները *de facto* տրամադրել են նրան ողջամիտ և բավարար հնարավորություն համարժեքորեն պաշտպանել իր շահերը:

Եզրակացություն. խախտում չկա (միաձայն):

Հոդված 6§2. Դատարանը կրկնել է, որ քրեական պատասխանատվությունը չի շարունակվում անձի մահից հետո, և հանգուցյալի կողմից հավանաբար կատարված հանցանքների համար քրեական պատժամիջոցների կիրառումը ողջ մնացածների հանդեպ պահանջում է մանրակրկիտ զննություն: Դիմումատուի գործով փաստերի մասին տեղեկացված վերաքննիչ դատարանը պարզաբանել էր, որ բռնագրավված գույքը ձեռք չի բերվել միայն Մ.Ս.-ի հանցավոր արարքների հետևանքով, այլ ամբողջ հանցավոր խմբի անօրինական գործունեության հետևանքով, որի անդամները ի վերջո դատապարտվել են: Ավելին, գործը քննող դատարանը հաստատել

է, որ բռնագրավված բնակարանը գնելու համար դիմումատուն փոխառություն էր վերցրել անհայտ աղբյուրներից և որ բռնագրավված բաժնեմասերը ձեռք էին բերվել օֆշորային կազմակերպության միջոցով, որը օգտագործվում էր հանցավոր խմբի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված փողերի լվացման համար: Դիմումատուն, համապատասխանաբար, չի պատժվել իր հանգուցյալ ամուսնու կողմից կատարված հանցավոր արարքների համար, և չի ժառանգել նրա մեղավորությունը:

Եզրակացություն. Խախտում չկա (միաձայն): Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված: Գույքի բռնագրավումը, որն իրականացվել է օրենքին համապատասխան, հետապնդում էր օրինական նպատակ, այն է՝ երաշխավորել, որ խնդրո առարկա գույքի օգտագործումը չի տա դիմումատուին նյութական առավելություն՝ հանրությանը վնաս հասցնելով: Մնում էր սահմանել, թե արդյոք արդարացի հավասարակշռություն էր պահպանվել այդ նպատակի և դիմումատուի հիմնարար իրավունքների միջև՝ մտաբերելով, *inter alia*, նրա վարքագիծը: Այդ առնչությամբ Դատարանը նշել է վերաքննիչ դատարանի այն եզրակացությունը այն մասին, որ դիմումատուն ուղղակիորեն գիտակցում էր, որ բռնագրավված գույքը կարող էր միայն ձեռք բերված լինել հանցավոր խմբի անօրինական գործունեության հետևանքով և առանձին քրեական վարույթների ընթացքում նա խոստովանել է, որ կատարել է հանցագործություններ ուղղված կալանքի տակ գտնվող իր ամուսնուն քրեական պատասխանատվություն կրելուց խուսափելուն: Վիճարկվող բռնագրավման գործընթացը վերաբերվում էր միջոցի և՛ օրինականությանը, և՛ վերջինիս

արդարացված լինելու հանգամանքին, ինչպես նաև հաստատել էր, որ ամբողջ բռնագրավված գույքը ձեռք էր բերվել անօրինական գործունեության հատկանքով: Ի վերջո, հաշվի առնելով քննվող հանցավոր գործունեության պարբերական բնույթը և կազմա-կերպվածության աստիճանը՝ գանգատի առարկա բռնագրավման միջոցը կարող էր էական լինել կազմակերպված հանցագործության դեմ պայքարում: Ծանր հանցագործությունների դեմ պայքարելու համար պետություններին տալով թույլատրելի հայեցողության շրջանակ, դիմումատուի սեփականության իրավունքին միջամտությունը չի եղել անհամաչափ հետապնդվող նպատակի հետ:

Եզրակացություն՝ չկա խախտում (միաձայն):

Մեղավորության հետմահու ճանաչում, որը հանգեցրել է ժառանգի քաղաքացիական պատասխանատվության՝ խախտում

Lagardère v. France

Գանգատ թիվ 18851/07


Վճիռ 12.4.2012 [V բաժանմունք]

(Տե՛ս վերը նշված 6§1, էջ 13)

ՀՈԴՎԱԾ 8

Անձնական կյանքը հարգելը_____

Համալսարանի դասախոսի դատապարտումը՝ հետազոտության նյութերը հասանելի դարձնելու մասին դատարանի հրամանին չենթարկվելու համար. Հոդված 8, անկիրառելի, անընդունելի



Gillberg v. Sweden

Գանգատ թիվ 41723/06

Վճիռ 3.4.2012 [ՄՊ]

Փաստերը: համալսարանի դասախոս դիմումատուն պատասխանատու էր 1977 թվականից 1992 թվականը ընկած ժամանակաշրջանում անցկացվող՝ երեխաների գերակտիվությանը և ուշադրության պակասին նվիրված հետազոտության համար: Ըստ դիմումատուի՝ համալսարանի էթիկայի հանձնաժողովը ծրագրի համար նախապայման է դարձրել այն, որ մասնակիցների մասին գաղտնի տեղեկությունները հասանելի լինեն միայն իրեն և իր անձնակազմին, և նա, այդ իսկ պատճառով, խոստացել է ամբողջական գաղտնիություն հիվանդներին և նրանց ծնողներին: 2002 թվականին մեկ այլ համալսարանի հետազոտող և ևս մեկ մանկաբույժ խնդրել են ծանոթանալ հետազոտության նյութերի հետ: Համալսարանի կողմից իրենց խնդրանքը մերժելուց հետո նրանք բողոք են բերել վարչական գործերով վերաքննիչ դատարան, որը հաստատել է, որ նրանց պահանջը օրինական էր և նրանց պետք է թույլատրերին ծանոթանալ նյութերին՝ դրանց օգտագործման սահմանափակման և համալսարանի սահմաններից դրանց պատճենները հանելու արգելքի պայմաններով: Այնուամենայնիվ, դիմումատուն մերժել է նյութը հանձնել, և այն ի վերջո ոչնչացվել է գործընկերների կողմից: Հետագայում դիմումատուն մեղադրվել և դատապարտվել է իր պաշտոնական դիրքը չարաշահելու համար: Նրա հանդեպ կիրառել են պայմանական պատիժ և 4,000 եվրոյին

համարժեք տուգանք: Նրա դատապարտումը հաստատվել էր վերաքննիչ դատարանի կողմից, որը գտել էր, որ վարչական վերաքննիչ դատարանի վճիռները չկատարելով՝ նա միտումնավոր կերպով արհամարհել է իր պաշտոնի համար նախատեսված պարտականությունները:

2010թ. նոյեմբերի 2-ին (տե՛ս նախադեպային տեղեկատվություն թիվ. 135) Դատարանի Պալատը հինգը երկուսի դեմ ձայներով եզրակացրել է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածների խախտում: Այդպիսի եզրակացության հանգեցրելով՝ այնուամենայնիվ Դատարանը բացված է թողել այն հարցը, թե արդյոք գանգատը ընկնում է 8-րդ և 10-րդ հոդվածների կարգավորման շրջանակների ներքո:

Օրենքը. դիմումատուի գանգատները այն մասին, որ Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածներով նախատեսված իր իրավունքները խախտվել են վարչական վերաքննիչ դատարանի վճռով, որով նրան պարտադրվել է հասանելի դարձնել հետազոտության նյութերը երկու այլ հետազոտողների համար, ժամկետների բացթողման պատճառով անընդունելի են ճանաչվել Պալատի կողմից: Համապատասխանաբար, Մեծ Պալատի իրավասությունը սահմանափակվում էր իր պաշտոնի չարաշահման և դատարանի կարգադրությունները չկատարելու համար իր դատապարտմանը առնչվող գազատների շրջանակներով:

Հոդված 8. Դատարանը պետք է սահմաներ, թե արդյոք դիմումատուի դատապարտումը իր պաշտոնի չարաշահման համար հանդիսանում էր «անձնական կյանքին»

միջամտություն 8-րդ հոդվածի ներքո: Այդ առնչությամբ այն նշել է, որ դիմումատուն հանդիսանում էր պետական կառույցում հանրային իշխանություն իրականացնող պաշտոնատար անձ: Նա չէր հանդիսանում երեխաների բժիշկը կամ հոգեբույժը և չէր ներկայացնում երեխաների կամ նրանց ծնողների շահերը:

Ի պատասխան դիմումատուի պնդումների, որ իր դատապարտումը վնասել է իր պատիվն ու համբավը և անբարենպաստ ազդեցություն է ունեցել իր բարոյական և հոգեբանական վիճակի վրա, Դատարանը կրկնել է, որ 8-րդ հոդվածով չի կարող գանգատ բերվել համբավի կորստի կամ այլ այն հետևանքների առաջ գալու հետ կապված պատճառաբանությամբ, որոնք հանդիսանում էին որևէ մեկի գործողությունների՝ մասնավորապես քրեական հանցագործության կատարման կանխատեսելի հետևանքներ: Գոյություն չունի Կոնվենցիայի որևէ դատական նախադեպ, որտեղ Դատարանը ընդունել է, որ քրեական դատապարտումը ինքնին համարվում է անձնական կյանքը հարգելու իրավունքի միջամտություն:

Դիմումատուի դատապարտումը չէր եղել ներպետական օրենսդրության անկանխատեսելի կիրառման արդյունք, և այն հանցագործությունը, որի համար նա դատապարտվել էր (պաշտոնեական դիրքի չարաշահում) չի ունեցել որևէ ակնհայտ առնչություն «անձնական կյանքը» հարգելու իրավունքի հետ, սակայն, մյուս կողմից, այն առնչվել է պետական պաշտոնյաների կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում մասնագիտական գործունեությանը և բացթողումներին: Չկա նաև որևէ նշում այն մասին, որ

դատապարտումը ունեցել է դիմումատուի մասնագիտական գործունեության վրա այնպիսի անդրադարձ, որը չէր հանդիսանում կանխատեսելի հետևանք այն հանցագործության, որի կատարման համար նրան դատապարտել էին: Իր դատապարտումը չի ունեցել որևէ բացասական անդրադարձ համալսարանում իր պաշտոնի վրա և նա չի հաստատել պատճառահետևանքային կապ իր դատապարտման և Հանրային առողջության ինստիտուտից իր պաշտոնից ազատելու միջև: Ցանկացած դեպքում, այդ աշխատանքի կորստի հետևանքով իր հնարավոր դրամական կորուստը կամ քրեական վարույթի ընթացքի ժամանակ որոշ ժամանակով իր գրքի տպագրման գործընթացները շարունակելու անհնարինությունը նույնպես հանդիսանում էին այդ հանցագործության կատարման կանխատեսելի հետևանքներ: Համապատասխանաբար, 8-րդ հոդվածի ներքո դիմումատուի իրավունքները չեն խախտվել և այդ դրույթը կիրառելի չէ:

Եզրակացություն. հաստատված է նախնական առարկություններ (միաձայն):

Հոդված 10: Դատարանը չի բացառել, որ ազատ արտահայտվելու «պասիվ» իրավունքը գտնվել է 10-րդ հոդվածի պաշտպանության ներքո: Այնուամենայնիվ, Դատարանը նշել է, որ այն նյութերը, որոնք դիմումատուն հրաժարվել է հասանելի դարձնել, պատկանել են համալսարանին և հանդիսացել հանրային մատչելիության սկզբունքի համաձայն հանրության համար մատչելի՝ Մամուլի ազատության մասին օրենքով և Գաղտնիության մասին օրենքով

նախատեսված կարգով: Այդ օրենսդրության համաձայն՝ պետական մարմնի համար անհնար էր նախապես համաձայնության գալ երրորդ կողմի հետ՝ պաշտոնական փաստաթղթերը հանրության հասանելիությունից զերծ պահելու համար: Այդ իսկ պատճառով, քրեական դատարանները դիմումատուի դատապարտման ժամանակ հաստատել են, որ հետազոտության մասնակիցներին տրված գաղտնիության երաշխիքները օրենքով նախատեսված միջոցներից ավելին են եղել: Ամեն դեպքում, քրեական դատարանների համար վարչական դատարանների վճիռները պարտադիր բնույթ են կրել, որը սահմանել էր, թե արդյոք փաստաթղթերը պետք է տրամադրվեին երկու այլ հետազոտողներին և ինչ պայմաններով: Դիմումատուն չի ներկայացրել իր պնդումները հաստատող որևէ համոզիչ ապացույց առ այն, որ հետազոտության մասնակիցներին տրված գաղտնիության իր երաշխավորությունները հանդիսացել են համալսարանի էթիկայի հանձնաժողովի պահանջ: Իրականում, որևէ օրենքով սահմանված գաղտնիքները չիրապարակելու պարտականությամբ կամ իր գործատուի որևէ հրամանով դիմումատուին չի արգելվել վարչական դատարանի վճիռն կատարելը, այլ դա պայմանավորված է եղել իր ներքին համոզմունքով, որ վարչական դատարանի վճիռները սխալ են:

Այս պարագայում, որոշիչ էր այն հարցը, թե արդյոք դիմումատուն, որպես պետական աշխատող, 10-րդ հոդվածի ներքո ունեցել է հետազոտության նյութերը հասանելի չդարձնելու անկախ «բացասական» իրավունք, չնայած, որ դա պատկանել է ոչ թե իրեն, այլ համալսարանին, և չնայած այն հանգամանքին, որ համալսարանը մտադիր

էր ենթարկվել վարչական դատարանի վճիռներին: Ըստ Դատարանի, այն եզրակացությունը, որ դիմումատուն ունեցել է այդպիսի անկախ «բացասական» իրավունք, կհակասեր համալսարանի սեփականության իրավունքներին, ինչպես նաև կոտնահարեր մյուս երկու հետազոտողների տեղեկատվություն ստանալու իրավունքը (10-րդ հոդված), ինչպես նաև կխախտեր դատարանի վեջնական վճռի կատարման գործընթացը (6-րդ հոդված): Դատարանը նաև նշել է, որ դիմումատուի կարգավիճակը չէր կարող համեմատելի լինել տեղեկատվության իրենց աղբյուրները պաշտպանող լրագրողների հետ, քանի որ իրենց աղբյուրներից ստացված և լրագրողների կողմից տարածված տեղեկատվությունը սովորաբար պատկանում է լրագրողին կամ մամուլին, մինչդեռ դիմումատուի գործով հետազոտության նյութերը պատկանել են համալսարանին և հանրային են եղել իրենց բնույթով: Բացի այդ, քանի որ դիմումատուն չէր նշանակվել հետազոտության մասնակիցների կողմից որպես իրենց բժիշկ, ապա նա չէր կրում իրենց առջև մասնագիտական գաղտնիության պահպանման պարտականություն:

Արդյունքում՝ 10-րդ հոդվածով նախատեսված դիմումատուի իրավունքները չեն խախտվել, և այդ դրույթը կիրառելի չէր:

Եզրակացություն. հաստատված նախնական առարկություններ (միաձայն):

Մոր արտաքսումից հետո երեխայի որդեգրումը՝ չնայած հոր դիմադրությանը. խախտում

K.A.B. v. Spain

Գանգատ թիվ 59819/08
Վճիռ 10.4.2012 [III բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուն Նիգերիայի քաղաքացի է: 2001 թվականին նա իր զուգընկերոջ և նրանց մեկամյա որդու հետ ներգաղթել են Իսպանիա: Նույն տարի որոշ ժամանակ անց նրա զուգընկերոջը արտաքսել են Իսպանիայից և արգելել վերադառնալ տաս տարվա ընթացքում: Նրա փաստաբանը գործը քննող դատավորի մոտ հայտարարել է, որ նրա տասներեք ամսեկան երեխան Իսպանիայում է, սակայն արտաքսումը միևնույնն է տեղի է ունեցել 2001թ. հեկտեմբերի 24-ին: Երեխային վերցրել են զույգի ընկերները, քանի որ դիմումատուն աշխատանքի բերումով ուրիշ քաղաքում է գտնվել: Ութ օր անց անչափահասների հարցերով զբաղվող դատախազի կողմից քննություն է սկսվել: 2001թ. նոյեմբերի 16-ին համարել են, որ ծնողները հրաժարվել են երեխայից և տեղավորել են մանկատանը: 2001թ. նոյեմբերի 30-ին դիմումատուն գնացել է Երեխայի իրավունքների պաշտպանության վարչություն և պնդել, որ հանդիսանում է երեխայի կենսաբանական հայրը՝ ասելով, որ համաձայն չէ նրա՝ մանկատուն տեղավորելու հետ: Նա հայտնել է հայրության հաստատման բժշկական ստուգման ենթարկվելու իր մտադրության մասին: Այնուամենայնիվ, բժշկական ստուգումը տեղի չի ունեցել, քանի որ դիմումատուն չէր կարողացել վճարել դրա համար: Դիմումատուից այլևս որևէ նորություն չստանալու պատճառով, երեխային տեղափոխել էին իրեն որդեգրած ընտանիք, և սկսվել է որդեգրման ընթացակարգը: Այնուամենայնիվ, դիմումատուն բարեհաջող

սկսել է հայրության հաստատման համար գործընթացը, ինչը ճանաչվել է 2005 թվականին, իսկ այնուհետև նա սկսել է որդեգրումը վիճարկելու վարույթ: 2006 թվականին նրա բողոքարկումը մերժվել է այն հիմքով, որ նա արդարացիորեն զրկվել է ծնողական իրավունքներից, և այդ իսկ պատճառով որդեգրման համար նրա համաձայնությունը անհրաժեշտ չի եղել: Դատարանը, մասնավորապես, հիմնվել է այն փաստի վրա, որ դիմումատուն երեխայի հետ երկար ժամանակահատված չի ապրել, որ 2001 թվականից ի վեր նա չի ձեռնարկել որևէ գործողություն երեխայի բարեկեցությունն ապահովելու գործում իր հետաքրքրությունը ապացուցելու համար, և որ նա սպասել է երկու տարի հայրության մասին պահանջ ներկայացնելու համար: Այդ վճիռը հաստատվել է վերաքննիչ բողոք ներկայացնելու հետևանքով ևս, իսկ դիմումատուի *amparo* բողոքը անընդունելի է ճանաչվել: Դիմումատուի որդու որդեգրումը իրեն խնամակալության տակ վերցրած ընտանիքի կողմից թույլ է տրվել Ընտանեկան դատարանի կողմից: Դիմումատուի ներկայացված բողոքները մերժվել են:

Օրենքը: Հոդված 8. Սույն գործը առնչվում է ամուսնությունից դուրս ծնված երեխայի և նրա կենսաբանական հոր միջև փոխհարաբերություններին: Դիմումատուի և իր որդու միջև ընտանեկան կապերի բացակայությունը ամբողջությամբ վերագրելի չէ միայն դիմումատուին, հաշվի առնելով, որ նա չի տեսել իր որդուն նրա մոր արտաքսումից հետո: Հաշվի առնելով դիմումատուի անորոշ կարգավիճակը, նրա կողմից ձեռնարկված գործողությունները բավարար էին ցույց տալու համար, որ նա ցանկանում էր ետ բերել իր երեխային: Չի

կարելի բացառել, որ «ընտանեկան կյանքի» պաշտ-պանությունը տարածելի կլիներ նաև իր որդու հետ կրկին կապ հաստատելու դիմումատուի մտադրությանը: Ցանկացած դեպքում իսպանական դատարանների որոշումները, որոնք մերժում էին իր որդու հետ որևէ կապի կամ վերամիավորման հնարավորությունը, հանդիսացել են, առնվազն, իր անձնական կյանքի իրավունքին միջամտություն:

Դատարանը քննել է սույն գործը 8-րդ հոդվածի ներքո Պետությունների դրական պարտավորությունների տեսանկյունից: Երեխայի տարիքը հաշվի առնելով՝ Դատարանը առանձնակի խստությամբ է անդրադարձել այն փաստին, որ երեխայի մոր արտաքսումից մինչև իրենից հրաժարվելու հայտարարությունը երեխան համարյա մեկ ամիս իրավական տեսանկյունից անորոշ կարգավիճակ է ունեցել: Հրաժարվելու մասին հայտարարությունը պատճառ է հանդիսացել որոշակի ընթացակարգի, որի հետևանքով երեխան որդեգրվել է իսպանական գույգի կողմից, որը նախապես վերցրել է իրեն մինչ որդեգրման հիմքերով: Այնուամենայնիվ, երեխայից հրաժարվելու իրավիճակը առնվազն կիսով չափ հանդիսացել է իշխանությունների մեղքը, քանի որ նրանք արտաքսել էին մորը առանց նախնական ստուգման և հաշվի չառնելով իր՝ երեխայի գոյության մասին դատավորին տրամադրված տեղեկատվությունը: Արտաքսման հրատապությունը արդարացնող որևէ բավարար բացատրություն չի եղել: Այնուամենայնիվ, վարույթի ընթացքում երբևէ չի մեջբերվել իշխանությունների պատասխանատվության հարցը: Մասնավորապես, Ընտանեկան դատարանը, առանց հաշվի առնելու դիմումատուի

հոգեպես անկայուն վիճակը 2001 թվականին, համարել է, որ դիմումատուն է ամբողջությամբ պատասխանատու իր որդու հետ կապի կորստի համար: Իրականում, դիմումատուն չէր տեղեկացվել ոչ հայրության բժշկական ստուգումը անցնելու համար գումարի վճարման անհրաժեշտության մասին, ոչ էլ այն մասին, որ ստուգումը կարող էր վճարվել Պետության կողմից՝ իրավական օգնության ծրագրով: Վերջապես, չնայած այն փաստին, որ Երեխաների պաշտպանության վարչությանը հայտնի էր դիմումատուի անունը և հասցեն, իրենք չեն փորձել կապ հաստատել նրա հետ՝ ենթադրաբար իր հայրությունը հաստատված չլինելու

պատճառաբանությամբ: Նույնիսկ այն բանից հետո, որ դիմումատուն 2003 թվականին գնացել է ընտանեկան հարցերով համապատասխան մարմին, որդեգրման ընթացակարգը, այնուամենայնիվ, շարունակվել է մեկ տարվա ընթացքում մինչև դրա կասեցումը հայրության հաստատման դիմումի ներկայացման հիմքով:

Այսպիսով, իշխանությունների անգործության հետևանքով ժամանակի ընթացքը, որին, առանց անհրաժեշտ նախնական համոզման երեխայի մոր արտաքսումը, դիմումատուին օգնության տրամադրման ձախողումը այն ժամանակ, երբ իր սոցիալական և ֆինանսական վիճակը առավել խոցելի էր նախնական ժամանակաշրջանում, երեխայից հրաժարվելու համար դատարանի կողմից որևէ այլ պատասխանատվության ենթարկելու քայլերի ձախողման հետ մեկտեղ, և այն եզրահանգումը, որ դիմումատուն կորցրել է իր որդու բարեկեցությունն ապահովելու հետաքրքրությունը, անկասկած խոչընդոտել են հոր և որդու վերամիավորման

հնարավորությանը: Ներպետական իշխանությունները, այդ իսկ պատճառով, չեն կատարել այսպիսի դեպքերում առանձնապես արագ գործելու իրենց պարտականությունը և չեն գործադրել համապատասխան և բավարար ջանքեր իր որդու հետ վերամիավորման դիմումատուի իրավունքը երաշխավորելու համար:

Եզրակացություն. խախտում (վեցն ընդդեմ մեկի ձայների հարաբերակցությամբ):

Հոդված 41. 8,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Արյունապղծության համար

դատապարտում. չկա խախտում

Stübing v. Germany

Գանգատ թիվ 43547/08

Վճիռ 12.4.2012 [V բաժանմունք]

Փաստերը: Երեք տարեկան հասակում դիմումատուն խնամակալության է հանձնվել: Նա ի վերջո որդեգրվել է և հետագայում կապ չի ունեցել իր կենսաբանական ընտանիքի հետ: 2000 թվականին իր կենսաբանական մոր մահից հետո դիմումատուն վերահաստատել է կապը իր կենսաբանական ընտանիքի հետ և փոխադարձ համաձայնությամբ սկսել է սեռական հարաբերություններ ունենալ իր կենսաբանական քույր հանդիսացող Ս.Կ.-ի հետ, ով այդ ժամանակ 16 տարեկան էր: Նրանք ապրել են համատեղ մի քանի տարի և ունեցել են չորս երեխա: Դիմումատուն մի քանի անգամ ազատագրվման է դատապարտվել արյունապղծության համար: Ս.Կ.-ն տառապել է լուրջ անհատական խանգարումներից և թույլ արտահայտված

ընկալելու անընդունակությամբ, և այդ իսկ պատճառով չի դատապարտվել: Դիմումատուի բողոքները իր դատապարտման դեմ մերժվել են: Դիմումատուի սահմանադրական բողոքը մերժելու ժամանակ Սահմանադրական դատարանը մանրամասն պարզաբանել է իր որոշման մեջ, թե ինչու նույն ծնողների զավակների միջև սեռական հարաբերությունները կարող են բացասաբար անդրադառնալ ընտանիքի կառուցվածքի և ընդհանրապես հասարակության վրա, ինչպես նաև հատկանքներ ունենալ այդպիսի հարաբերությունների արդյունքում ծնված երեխաների համար:

Օրենքը: Հոդված 8. Որպես ընդհանուր հիմք էր այն հանգամանքը, որ դիմումատուի դատապարտումը հանդիսացել է սեռական կյանքը ներառող իր անձնական կյանքի իրավունքի միջամտություն: Այնուհետև, դատապարտումը համարժեք է եղել ներպետական օրենսդրությանը, մասնավորապես, Քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասին, որը արգելում է փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերությունները նույն ծնողների չափահաս զավակների միջև, ինչը նպատակ է հետապնդում պաշտպանել այլ անձանց բարոյականությունը և իրավունքները: Պետք է քննել այն հարցը, թե արդյոք դիմումատուի դատապարտումը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակության մեջ՝ հաշվի առնելով արդարացի հավասարակշռությունը, որը պետք է դրվեր համապատասխան հակադարձ շահերի և Պետության թույլատրելի հայեցողության միջև: Վերջինիս առումով Դատարանը նշել է, որ չի եղել որևէ համաձայնություն Եվրոպայի Խորհրդի անդամ Պետությունների միջև, թե

արդյոք նույն ծնողների չափահաս զավակների միջև փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերությունները պետք է քրեորեն պատժելի լինեն: Այնուամենայնիվ, դիտարկված քառասունչորս պետություններից մեծամասնություն կազմող քսանչորսը այդ դեպքերում սահմանել են քրեական պատասխանատվություն, և բոլոր իրավական համակարգերը, ներառյալ որոնք չեն սահմանում քրեական պատասխանատվություն, արգելում էին նույն ծնողների զավակների ամուսնությունը: Այսպիսով, առկա էր համընդհանուր համաձայնություն, որ նույն ծնողների զավակների միջև սեռական հարաբերությունները ընդունված չեն եղել, թե իրավական տեսակետից, և թե՝ հասարակության կողմից ընդհանրապես: Ներպետական իշխանությունները, այսպիսով, ունեցել են թույլատրելի հայեցողության լայն շրջանակ այն հարցում, թե ինչպես պայքարել փոխադարձ համաձայնությամբ չափահասների միջև արյունապիղծ հարաբերությունների դեմ, չնայած նրան, որ իրենց որոշումը վերաբերել է անհատի մասնավոր կյանքի սեռական կողմին: Մանրամասն քննելով կողմ և դեմ հանդիսացող բոլոր փաստարկները, Դաշնային Սահմանադրական Դատարանը հանգել է նրան, որ քրեական պատասխանատվության կիրառումը արդարացված է եղել ընտանիքի պաշտպանության, ինքնորոշման և հասարակական առողջության տեսնակյունից վերցրած: Այն նաև գտել է, որ նույն ծնողների զավակների միջև սեռական հարաբերությունները կարող են էապես վնասել ընտանիքի կառուցվածքին և, որպես

հետևանք, համընդհանուր հասարակությանը: Ավելացնելով Դատարանը նշել է, որ Ս.Կ.-ն առաջին անգամ սեռական հարաբերություններ է ունեցել դիմումատուի հետ տասնվեց տարեկան հասակում՝ իրենց կենսաբանական մոր մահից հետո: Նա տառապել է լուրջ անհատական խանգառումներով, ինչը իրեն դրել է դիմումատուից զգալիորեն կախման մեջ: Հաշվի առնելով դիմումատուի գործով Սահմանադրական դատարանի զգույշ դիտարկումը, ինչպես նաև Պետության կողմից այս հարցով թույլատրելի հայեցողության լայն շրջանակը, Դատարանը եզրակացրել է, որ ներպետական դատարանները դատապարտելով դիմումատուին արյունապիղծության համար չեն գերազանցել իրենց իրավասությունները:

Եզրակացություն. չկա խախտում (միաձայն):


**Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը
Ընտանեկան կյանքի նկատմամբ
հարգանքը
Բնակարան ունենալու իրավունքի նկատմամբ
հարգանքը**

**Գնչուների ծրագրված արտաքսումը
կառուցված բնակավայրից՝ առանց նոր
տուն տրամադրելու առաջարկության՝
արտաքսումը կհանդիսանար խախտում**

Yordanova and Others v. Bulgaria

Գանգատ թիվ 25446/06

Վճիռ 24.4.2012 [IV բաժանմունք]



Փաստերը: Դիմումատուները ապրում են գնչուների համար նախատեսված բնակավայրում, որը տեղակայված է Սոֆիայի տեղական ինքնակառավարման մարմնին պատկանող հողի վրա: Առաջին անգամ այդ հողամասը գնչուական ընտանիքների կողմից զբաղեցվել է 1960-ական և 1970-ական թվականներին, իսկ 1990-ական թվականներին մարդկանց ավելի հաճախակի ժամանումներով: Նրանց կացարանները եղել են ինքնաշեն և կառուցվել են առանց իշխանությունների թույլտվության: Չեն գործել նաև կոյուղի կամ ջրմուղ համակարգերը: Անվիճելի է, որ դիմումատուների տները չեն համապատասխանել նմանատիպ կառույցների համար սահմանված հիմնական պահանջներին ու անվտանգության կանոններին և որ դրանք չէին կարող օրինականացվել առանց էական վերակառուցում կատարելու:

Վաղ 1990-ական թվականներին Սոֆիայի որոշ թաղամասերում աճել է լարվածությունը գնչու բնակիչների և իրենց ոչ գնչու հարևանների միջև: Գնչուների բնակավայրերի խնդիրը լուրջ բանավեճերի առարկա է հանդիսացել և մի շարք ազդեցիկ քաղաքական գործիչներ խոսել են Սոֆիայից «գնչուական գետտոներից» ազատվելու մասին: Այնուամենայնիվ, ո՛չ Պետությունը, և ո՛չ էլ տեղական ինքնակառավարման մարմինները չեն փորձել հեռացնել դիմումատուներին և իրենց ընտանիքները մինչև 2005թ. սեպտեմբերի 17-ը, մինչև այդ շրջանի ղեկավարը չի կարգադրել իրենց բռնի հեռացնել: Ներպետական դատարանները գտել են, որ այդ հրամանը օրինական է եղել: Քաղաքապետը պաշտոնապես հայտարարել է, որ այդ բնակավայրի բնակիչների համար անհնար էր գտնել այլընտրանքային

բնակավայր, քանի որ նրանք գրանցված չեն եղել որպես բնակարանի կարիք ունեցողներ, և տեղական ինքնակառավարման մարմինները չէին կարող տալ իրենց առավելություն այն մարդկանց համեմատ, ովքեր սպասել են բնակարան ձեռք բերելուն երկար տարիներ շարունակ: Այնուամենայնիվ, այդ միջոցառումը կասեցվել է Եվրոպական Խորհրդարանի միջամտության և Եվրոպական դատարանի Կանոնակարգի 39-րդ կանոնով սահմանված ժամանակավոր միջոցի ընդունման արդյունքում:

Օրենքը: 8-րդ հոդված: Դիմումատուների վտարումը իրենց ժամանակավոր կացարաններից, որոնք նրանք որպես մի քանի հարյուրանոց հանրության մաս իրենց ընտանիքների հետ զբաղեցնում էին տարիներ շարունակ, կարող էր անդրադառնալ իրենց կենսակերպին, սոցիալական և ընտանեկան կապերին, և այդպիսով, հանդիսացել է իրենց անձնական կյանքի, ընտանիքի և տուն ունենալու իրավունքներին միջամտություն: Այսպիսի միջամտությունը օրինական հիմք ուներ ներպետական օրենսդրության մեջ և հետապնդում էր երկրի տնտեսական բարեկեցությունը և մարդկանց իրավունքներն ու առողջությունը պաշտպանելու իրավաչափ նպատակներ:

Այնուամենայնիվ, կառավարությունը չի ապացուցել, որ կիրառված միջոցները անհրաժեշտ էին ժողովրդավարական հասարակությունում: Չնայած նրան, որ իշխանությունը սկզբունքորեն ջանացել է վերականգնել համայնքային հողը, որն ապօրինաբար զավթել էին, նրանք հանդուրժել են գնչուների անօրինական բնակվելը մի քանի տասնամյակներ՝ դրանով իսկ թույլ տալով դիմումատուներին ամուր

կապեր հաստատել հարևանների հետ և ապրել հասարակական կյանքով: Համաչափության սկզբունքը պահանջում էր, որպեսզի այն իրադրությունները, որոնք առնչվել են ամբողջ հանրությանը և երկար ժամանակահատվածին, դիտարկվեին լիովին այլ կերպ, քան ապօրինաբար զավթած սեփականությունից անձին դուրս հանելու վերաբերյալ սովորական գործերը: Չնայած, այդ ժամանակ գործող ներպետական օրենսդրության համաձայն տեղական ինքնակառավարման մարմիններից չէր պահանջվում հաշվի առնել ներգրավված տարատեսակ շահերը կամ դիտարկել համաչափությունը, և, հիմնվելով այդ իրավական համակարգի վրա, չեն տվել որևէ այլ բացատրություն դիմումատուներին վտարելու համար, քան այն հաստատումը, որ նրանք ապօրինաբար զբաղեցրել են հողը: Ներպետական դատարանները հստակ հրաժարվել են լսել այն փաստարկները կապված համաչափության և հողը դիմումատուների կողմից երկար ժամանակ առանց խոչնդոտելու զբաղեցված լինելու հանգամանքի վերաբերյալ: Անվիճելի էր, որ դիմումատուների տների մեծամասնությունը չէր համապատասխանում հիմնական սանիտարահիգիենիկ և կառուցապատման պահանջներին, սակայն կառավարությունը ցույց չի տվել, որ այս խնդիրների լուծման համար դիտարկվել են այնպիսի այլընտրանքային մեթոդներ, ինչպես հնարավորության դեպքում շինությունների օրինականացում, հասարակական կոյուղու կառուցում և վտարման անհրաժեշտության դեպքում այլընտրանքային կացարանի փնտրելու գործընթացի մեջ աջակցություն: Իշխանությունները չեն դիտարկել նաև դիմումատուների անտուն մնալու վտանգը:

Դրա փոխարեն նրանք փորձել են ի կատար ածել հրամանը 2005 և 2006 թվականներին՝ անկախ հնարավոր հատկանքներից: Կառավարությունը չի ապացուցել, որ ինչպես արդեն նշվել էր, այդ հողը անհապաղ անհրաժեշտ էր օտարել հանրային շահի համար: Ի վերջո, իշխանությունները հրաժարվել են դիտարկել այնպիսի մոտեցումներ, որոնք առանձնակի հիմնված կլինեին գնչու համայնքի կարիքների վրա այն հիմքով, որ դա կհանդիսանար խտրականություն հասարակության մեծամասնության նկատմամբ: Այդ փաստարկով, այնուամենայնիվ, չհաջողվեց ճանաչել դիմումատուների դրությունը որպես վտարված համայնք և սոցիալապես ոչ բարենպաստ պայմաններում գտնվող խումբ, որը հնարավոր է ուներ աջակցության կարիք, որ կարողանար արդյունավետ իրականացնել միևնույն իրավունքները, որոնք ունեին հասարակության մեծամասնություն կազմող անդամները: Ավելի սակավ իրավունքներ ունեցող դիմումատուների խմբի կարգավիճակը պետք է ծանրակշիռ գործոն հանդիսանար նրանց անօրինական բնակության վերաբերյալ մոտեցումների դիտարկման համար, և, եթե նրանց վտարումը անհրաժեշտ էր, ապա դրա անցկացման ժամանակ, ձևի և, հնարավորության դեպքում, այլընտրանքային կացարանի տրամադրման հետ կապված հարցերի դիտարկման համար: Սույն գործում այդ գործոնը հաշվի չի առնվել:

Ճիշտ է, որ 2005թ. սեպտեմբերից ի վեր կառավարությունը և տեղական իշխանությունները տարբեր առիթներով հայտարարել են, որ նրանք մտադրություն ունեն լուծել դիմումատուների տան հարցը նրանց այլընտրանքային կացարանի

տրամադրմամբ, սակայն այդ առնչությամբ քննարկումները և ծրագրերը չեն հանդիսացել իրենց վտարումը փոփոխելու իրավասություն ունեցող մարմնի առջև պաշտոնական ընթացակարգի մաս և չեն հանգեցրել դիմումատուների վերաբերյալ որևէ կոնկրետ օրինական գործողության իրականացմանը: Վտարման մասին հրամանը մնում էր ուժի մեջ և դեռևս հարկադրաբար կիրառելի էր: 2005թ. վտարման հրամանը, ընդհանուր առմամբ, օրենքի վրա հիմնված է եղել և արձակվել ու վերանայվել է որոշում կայացնելու ընթացակարգի համաձայն, որը չէր պահանջում համաչափության հարցը քննության առնելու խնդիր և չէր տրամադրում երաշխիքներ անհամաչափ միջամտություն իրականացնելու դեպքում:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 46: Ընդհանուր միջոցառումների մեջ պետք է ներառվեն համապատասխան ներպետական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի փոփոխությունները, որպեսզի երաշխավորվի, որ հանրային հողը կամ կառույցը վերականգնելու մասին հրամանները այն մասով, որով կարող են ազդել Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներին և ազատություններին, նույնիսկ անօրինական զավթման դեպքում պետք է հստակորեն սահմանեն հետապնդվող նպատակները այն անձանց, ում վրա դրանք տարածվում են և համաչափությունը ապահովող միջոցները:

Մասնավոր միջոցառումները պահանջում են կամ 2005թ. վտարման մասին հրամանի չեղյալ հայտարարում, կամ՝ ընթացիկ միջոցառումների կասեցում, որպեսզի, ինչպես պարզաբանվում է վճռի մեջ, երաշխավորվի

իշխանությունների գործելը Կոնվենցիայի պահանջներին համապատասխան:

Հոդված 41: Խախտման մասին եզրակացությունը բավարար է ոչ նյութական վնասի արդարացի փոխհատուցման համար:

Ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք

Արտոնության տրամադրման մերժում երկարաժամկետ բնակակցին՝ իր զուգընկերոջ դեմ քրեական վարույթի ընթացքում վկայություններ տալու ընթացքում. խախտում չկա

Van der Heijden v. the Netherlands

Գանգատ թիվ 42857/05

Վճիռ 3.4.2012 [ՄԴ]

Փաստերը: Դիմումատուին որպես վկա կանչել են դատարան մահացու ելքով հրաձգության քրեական հետաքննության առնչությամբ, սակայն նա հրաժարվել է գործը քննող դատավորի առջև ցուցմունք տալուց այն հիմքով, որ նա տասնհինգ տարի լինելով հիմնական կասկածյալի բնակակից և նրանից ունենալով երկու երեխա, իրավունք է վերապահում նրան ունենալ վկայություն տալու միևնույն արտոնությունները, որոնք, համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի, ունեն կասկածյալների ամուսինները և գրանցված զույգերը: Արդյունքում նա տասներեք օր ժամկետով կալանավորվել է՝ ցուցմունք տալու մասին դատական հրահանգին չենթարկվելու պատճառով: Բերված բողոքի առնչությամբ Գերագույն դատարանը ղեկավարվել է նրանով, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված վկայություն տալու

արտոնությունները պաշտպանում են «ընտանեկան կյանքը» բացառապես ամուսինների կամ գրանցված զույգերի միջև, այլ ոչ թե այլ զույգերի, այդ թվում երկարաժամկետ բնակակիցների, միջև: Այդ իրադրության հետ կապված որևէ տարբերություն օբյեկտիվորեն և խելամտորեն արդարացված կլինե՞ր օրենքով նախատեսված վկայություն տալու պարտականության համար բացառություններ սահմանելու տեսանկյունից՝ ճշմարտության բացահայտման և իրավական որոշակիությունից ելնելով:

Օրենքը: Հոդված 8: Դիմումատուին իր երկարաժամկետ բնակակցի դեմ վկայություն տալ պարտադրելու փորձը հանդիսացել է իր ընտանեկան կյանքի միջամտություն: Այդ միջամտությունը եղել է «օրենքին համապատասխան» և հետապնդել է հանցագործության կանխման իրավաչափ նպատակ:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք միջամտությունը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում, Անդամ պետությունների կողմից կիրառվող լայնածավալ պրակտիկան վկաներին հարկադրելու հետ կապված նպաստել է Պետություններին թույլատրելի հայեցողության լայն շրջանակ տալու հնարավորությանը երկու մրցակցող հանրային շահերը հավասակշռելու, այն է՝ ծանր հանցագործությունների հետապնդման և ընտանեկան կյանքի իրավունքը Պետության միջամտությունից պաշտպանելու գործում:

Հոլանդիան հանդիսանում էր այն բազմաթիվ Անդամ Պետություններից մեկը, որը սահմանել է կոնկրետ կարգի վկաների

համար օրենքով նախատեսված վկայություն տալու արտոնություն: Քանի որ ցուցմունք չտալու իրավունքը հանդիսանում է հանրային շահ հանդիսացող սովորական քաղաքացիական պարտականությունից բացառություն, ճանաչման դեպքում այն կարող է դառնալ պայմանների և ձևականությունների առարկա՝ այդ իրավունքից օգտվողների հստակորեն նշված ցանկով: Հոլանդիայի օրենսդրությունը նախատեսել է դա «հստակորեն և իրագործելի կերպով»՝ այդ բացառության տարածումը սահմանափակելով միայն կասկածյալների մոտ ազգականների, ամուսինների, նախկին ամուսինների, գրանցված զույգերի և նախկինում գրանցված զույգերի վրա՝ դրանով իսկ սահմանափակելով այդ բացառության տարածումը միայն այն անձանց շրջանակով, ում կապը կասկածյալի հետ կարող է օբյեկտիվորեն հաստատված լինի: Անդամ Պետությունները իրավունք ունեին սահմանափակել արտոնությունից չօգտվողների շրջանակը և առանձնացնել ամուսնությունը կամ գրանցված զույգերին: Դատարանը չի ընդունել դիմումատուի այն պնդումը, որ իր զուգընկերոջ հետ հարաբերությունները, որոնք, չնայած և հասարակական պայմաններում հավասար էին ամուսնությանը կամ գրանցված ընկերակցությանը, պետք է հանգեցնեին միևնույն իրավական հետևանքների ինչ ձևակերպված միությունը: Որոշիչ էր ոչ թե հարաբերությունների աջակցող բնույթի և ժամանակային առումով երկար լինելու հանգամանքը, այլ պետական կարգով հաստատված լինելու առկայությունը, որն իր հերթին կնշանակեր պայմանագրային կարգով իրավունքների և

պարտավորությունների հաստատում: Նման օրենքով նախատեսված համաձայնության բացակայությունը դարձրել էր դիմումատուի փոխհարաբերությունները իր զուգընկերոջ հետ էապես տարբերվող ամուսնական զույգի կամ գրանցված ընկերակցության մեջ գտնվող զույգի միջև ունեցած նույն տեսակի հարաբերություններից: Եթե Դատարանը հանգեր մեկ այլ եզրակացության, կստեղծվեր անհրաժեշտություն գնահատել չգրանցված ոչ ամուսնական զույգի էությունը մի շարք առանձին գործերի դեպքում, կամ սահմանել պայմաններ, որոնք կներառեին իրավական առումով գրանցված զույգին վերաբերող հատկանիշները՝ վերջիններիս բացակայությամբ առկա զույգերին:

Նույնիսկ չնայած նրան, որ մի քանի Անդամ Պետություններ, ներառյալ՝ Հոլանդիան, վերաբերվում են ամուսնական զույգին և ամուսնական զույգին նմանվող հարաբերություններում գտնվող զույգերին հավասարազոր այլ նպատակների համար, ներառյալ սոցիալական ապահովությունը և հարկերի գանձումը, այս խնդիրների հետ կապված հարցերը լուծվում են այլ տրամաբանությամբ, քան դրանք առնչվում են քրեական գործը վարելու կարևոր հանրային շահին: Չկար որևէ փաստարկ առ այն, որ դիմումատուին և իր զուգընկերոջը երբևէ արգելել են ամուսնանալ կամ գրանցված հարաբերություններ ունենալ: Ցանկացած դեպքում այդպիսի որոշում չկայացնելու համար նա չպետք է ենթարկվեր քննադատության: Այնուամենայնիվ, այդպիսի ընտրություն կատարելուց հետո նա պետք է ընդուներ դրա իրավական հետևանքները, մասնավորապես, որ նա մնում էր «պաշտպանված» ընտանեկան հարաբերությունների շրջանակից դուրս, որի

հանդեպ տարածվում է «վկայություն չտալու արտոնության» բացառությունը: Այս դեպքում Դատարանը չի գտնում, որ իր ընտանեկան կյանքի հանդեպ ենթադրյալ միջամտությունը այնքան ծանր կամ անհամաչափ էր, որ անարդարացիորեն կվնասեր իր շահերին: Համաչափ է եղել նաև իր տասներեքօրյա կալանավորումը, քանի որ ներպետական օրենսդրությունը սահմանել է համապատասխան ընթացակարգային երաշխիքներ:

Եզրակացություն. չկա խախտում (տաս ծայնը յորթի դեմ):

ՀՈՂՎԱԾ 9

Կրոնի ազատություն

Հրեական տոնի օրը նախատեսված դատական նիստի հետաձգման մերժում՝ չկա խախտում

Francesco Sessa v. Italy

Գանգատ թիվ 28790/08

Վճիռ 3.4.2012 [II բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուն, ով հրեա էր և մասնագիտությամբ փաստաբան, ներկայացրել է իր վստահորդին գործով փաստերի ուսումնասիրմանը վերաբերող դատական նիստին: Քանի որ գործով դատավորը չէր կարող մասնակցել նշանակված դատավարությանը, վերջինիս փոխարինողն առաջարկել էր կողմերին ընտրել հետաձգվող նիստի նշանակման ամսաթվերից մեկը, այն է՝ 2005թ. հոկտեմբերի 13 և 18՝ ըստ դատական նիստերի օրացույցի: Դիմումատուն պնդել է, որ առաջարկված երկու ամսաթվերն էլ

համապատասխանաբար համընկել են հրեական Յոմ Կիպուր և Սուկոտ տոների հետ և հայտնել է հետաձգված դատական նիստին ներկա գտնվելու անհնարինության մասին՝ ելնելով իր կրոնական պարտավորություններից: Դատավորը ի վերջո նշանակել է նիստը 2005թ.-ի հոկտեմբերի 13-ին: Դիմումատուն նախագահող դատավորին դիմում է ներկայացրել՝ նիստը հետաձգելու վերաբերյալ, ինչպես նաև քրեական բողոք դատավորի դեմ: Դիմումատուի դիմումը մերժվել էր: 2008թ.-ին քրեական բողոքին ընթացք չի տրվել այն հիմքով, որ գործում չէր հայտնաբերվել որևէ տարր, որը կապացուցեր հրեական կրոնը ազատ դավանելու նրա իրավունքի ոտնահարման փաստը և ոչ էլ որևէ ցանկություն վիրավորելու նրա արժանապատվությունը՝ իր կրոնական պատկանելիության առիթով:

Օրենքը: Հոդված 9: Դատավորը որոշում է կայացրել չբավարարել դիմումատուի հայցը՝ հիմնվելով քրեական դատավարության դրույթների վրա, ըստ որոնց միայն մեղադրող և պատասխանող կողմի բացակայությունն է թույլ տալիս դատական նիստը հետաձգել (բողոք բերող կողմի ներկայությունը անհրաժեշտություն չհամարելով):

Դատարանը չի ընդունել, որ խնդրո առարկա դատական նիստի ամսաթվի ամրագրումը հրեական տոնի հետ համընկնումով, ինչպես նաև այդ ամսաթիվը հետաձգելու մերժումը կարող են դիտվել որպես դավանանքի ազատության դիմումատուի իրավունքների սահմանափակում: Դիմումատուն, ում համար պետք է տեսանելի լիներ այն, որ իր դիմումը դատական նիստը հետաձգելու համար կարող

է մերժվել ըստ գործող օրենքների դրույթների, կարող էր այնպես կազմակերպել, որ հնարավոր լիներ իր փոխարինումը դատական նիստին՝ մասնագիտական պարտավորությունների կատարումը ապահովելու նպատակից ելնելով: Դիմումատուն իր բողոքում չի ցույց տվել, որ կրոնափոխման ճնշումների է ենթարկվել կամ նրան խանգարել են դավանել իր կրոնը կամ համոզմունքները:

Այնուամենայնիվ, նույնիսկ եթե ենթադրենք, որ դիմումատուի իրավունքը խախտվել է 9 § 1 հոդվածով, միևնույն է այն արդարացվել է այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության և մասնավորապես արդարադատության պատշաճ իրականացմամբ, ինչպես նաև գործը ողջամիտ ժամկետներում լսելու սկզբունքից ելնելով: Այս պարագայում միջամտությունը ունեցել է կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

Եզրահանգում՝ խախտում չկա (չորս ծայն՝ ընդդեմ երեքի)

ՀՈԴՎԱԾ 10

Ազատ արտահայտվելու իրավունք

Համալսարանի դասախոսի

դատապարտումը՝ հետազոտության

նյութերը հասանելի դարձնելու մասին

դատարանի հրամանին չենթարկվելու


համար՝ 10-րդ հոդվածը կիրառելի չէ,

անընդունելի:

Gillberg v. Sweden

Գանգատ թիվ 41723/06

Վճիռ 3.4.2012 [ՄԴ]



(Տե՛սվերը նշված 8-րդ հոդվածը, էջ 17)

Լրագրողի պայմանական ազատագրվում և արգելք զբաղվելու մասնագիտական աշխատանքով՝ պատասխանելու իրավունք չտրամադրելու կամ մերժման համար պատճառաբանություն չտրամադրելու համար՝ խախտում

Kaperzyński v. Poland

Գանգատ թիվ 43206/07
Վճիռ 3.4.2012 [Section IV]

Փաստերը: Դիմումատուն թերթում հրատարակել էր մի հոդված, որում քննադատում էր տեղական իշխանություններին կոյուղու ցանցում առկա թերությունները չվերացնելու համար: Քաղաքապետը նույն թերթում տպագրել էր հերքող հոդված, ինչպես նաև պահանջել էր, որ լրագրողը անդրադարձ կատարեր ապատեղեկատվությանը և անձամբ հերքեր՝ ինչպես նախատեսված է մամուլի մասին օրենքի 32-րդ հոդվածով: Դիմումատուն չի պատասխանել քաղաքապետի նամակին և հետագայում մեղադրվել է վերոհիշյալ օրենքի 46-րդ հոդվածով՝ իրավախախտում կատարելու համար, դատապարտվելով չորս ամսվա պայմանական ազատագրվման, այն է՝ ամսեկան քսան ժամ հանրային աշխատանքների կատարում և մասնագիտական աշխատանքով զբաղվելու իրավունքից զրկում:

Օրենքը: Հոդված 10: Դիմումատուի նկատմամբ կիրառված պատիժը միջամտել է նրա խոսքի ազատության իրավունքին: Ավելի վաղ այդ սահմանափակումը նախատեսվել էր

ներպետական օրենսդրությամբ (իհարկե այդ նորմերը հետագայում ճանաչվել էին հակասահմանադրական) և օրենքով սահմանված կարգով նպատակ են հետապնդել պաշտպանելու այլոց բարի համբավը կամ իրավունքները: Մնում է պարզել, թե անհրաժեշտ էր արդյոք ժողովրդավարական հասարակությունում պատժի ենթարկել՝ «քաղաքային կոյուղու վտանգավորությունը առողջության համար» թեմայով հոդվածի համար: Հոդված, որը անկասկած տեղական համայնքի ընդհանուր շահերից բխող հարց էր շոշափում:

Այն քննադատությունները, որ հոդվածը ներառում էր քաղաքապետի և տեղական իշխանությունների կառավարման վերաբերյալ ամուր հիմքեր ունեին, անձնական բնույթի, վիրավորական կամ անպատշաճ չէին: Միաժամանակ, ճշգրտող հոդված կամ պատասխան հրատարակելու պարտավորությունը իրավական տեսանկյունից՝ ելնելով մամուլի ազատության իրավունքից, որպես պարտավորություն, ծայրահեղ կամ ոչ ողջամիտ դիտվել չէր կարող: Հարկ է նկատել, որ, պատասխան կամ ճշգրտող հոդված հրատարակելու պարտավորությունը չկատարելը կամ այդ մասին պահանջող կողմին գրավոր պատճառաբանություն չուղարկելը քննադատելի չէ, քանի որ, տուժող կողմը, ինքը կարող է հերքել սխալ տեղեկատվությունը՝ նույն թերթի խմբագրական պրակտիկային համապատասխան: Այս առումով Դատարանը պաշտպանել է ներպետական դատարանի եզրահանգումը առ այն, որ դիմումատուն չի կատարել օրինական պարտավորությունը՝ թերթում չհրատարակելով քաղաքապետին

պատասխան հողված և չպատճառաբանելով հրատարակման մերժումը: Այնուամենայնիվ, դիմումատուի խոսքի ազատության իրավունքին միջամտություն ընդհանաչափ էր: Դիմումատուն ենթարկվել էր քրեական պատժի մի հանցանքի համար, որը առավելապես ընթացակարգային բնույթի էր (այն որևէ առնչություն չի ունեցել վիճարկվող հողվածի բովանդակությանը)՝ նախատեսված այնպիսի օրենսդրությամբ, որը մի կողմից խոչնդոտում էր դիմումատուին խոսքի ազատության հիմքով ներկայացնել փաստարկներ և մյուս կողմից դատարանին հաշվի առնել այդ փաստարկները: Բացի պայմանական ազատազրկման սահմանափակումից, դիմումատուին երկու տարով արգելվել է զբաղվել լրագրողի մասնագիտությամբ: Այդ պատիժը ոչ միայն խիստ է եղել, այլ ավելին, այն էականորեն սպառնացող ազդեցություն կարող էր ունենալ հասարակական ընդհանուր շահի համար՝ ազատ և բաց քննարկումը խոչնդոտելու առումով: Վերջապես, կարևոր է նաև հիշել, որ մեկ այլ գործում Լեհաստանի Սահմանադրական դատարանը հակասահմանադրական էր ճանաչել մամուլի մասին օրենքով նախատեսված պատասխանի իրավունքի իրացման կարգը և շրջանակները: Այս պայմաններում, ժողովրդական հասարակությունում չկար միջամտության անհրաժեշտությունը:

Եզրահանգում՝ խախտում (միաձայն):

Հոդված 41՝ 3,000 եվրո որպես բարոյական փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 13

Արդյունավետ միջոց

Իրավական պաշտպանության նոր միջոցի անարդյունավետությունը Եվրոպական դատարանի պիլոտային վճռի հիման վրա ներպետական իշխանությունների կողմից՝ բնակարանի տրամադրման որոշման չկատարման հետ կապված՝ խախտում

Ilyushkin and Others v. Russia

Գանգատ թիվ 5734/08

Վճիռ 17.4.2012 [1 բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուները նախկին զինվորականներ են: Մասնագիտական կարիերայի ավարտին նրանց վերաբերյալ վճիռներ են ընդունվել ըստ որի զինվորական իշխանությունները պետք է վերջիններիս բնակարան տրամադրեին: Վճիռներից շատերը դեռ ամբողջությամբ չէին կատարվել Եվրոպական դատարանի կողմից սույն վճռի կայացման օրը: Ինչպես հետևում է Դատարանի *Burdov (no. 2)* պիլոտային վճռից Ռուսաստանը փոխհատուցման վերաբերյալ իրավական ակտ էր ընդունել, որով իրավական պաշտպանության նոր միջոց էր ներկայացվել կապված Պետության դեմ դատական ակտերի կատարման ձգձգումների, ինչպես նաև ծայրահեղ երկար տևող դատավարությունների հետ: Դիմումատուներից երկուսը փոխհատուցման մասին այդ նոր իրավական ակտի հիման վրա դիմում էին ներկայացրել՝ իրենց օգտին դատական ակտի պետության կողմից չկատարման դեմ: Նրանց պահանջը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ նոր իրավական ակտը կիրառելի չի եղել բնակարանների հատկացման հարցի նկատմամբ:

Օրենքը: Հոդված 13՝ համակցված Կոնվենցիայի 6 § 1 հոդվածով և Թիվ 1 Արձանագրություն 1-ին հոդվածով: Փոխհատուցման մասին իրավական ակտի ձևակերպումը ըստ Գերագույն Դատարանի մեկնաբանության եղել է այն, որ տվյալ իրավական ակտը կիրառելի էր դրամական պարտավորությունների չկատարման և ոչ թե գույքով տրվող պարտավորությունների չկատարման համար: Ուստի Դատարանին կրկին հաստատեց, որ ռուսական օրենսդրությամբ ներկայումս չի գործում որևէ արդյունավետ իրավական միջոց, այն է՝ կանխարգելիչ կամ փոխհատուցող, որը թույլ կտար պարտադրել արագացնելու Պետությանը դատական ակտի կատարումը կամ փոխհատուցում ստանալու դատական ակտի կատարումն ուշացնելու պարագայում, բացառությամբ այն գործերի, որոնք ընկնում էին պիլոտային վճռից հետո ընդունված փոխհատուցման մասին իրավական ակտի շրջանակների ներքո: Դատարանը խորը ցավով նշել է, որ ներպետական իրավական արդյունավետ միջոցի բացակայության խնդիրը, որը որակել է որպես կառուցվածքային և շարունակական, շարունակել է մնալ խնդիր գործերի լայն շրջանակի համար այնպես, ինչպես ներկայիս քննվող գործը, որը ստիպում է իր հերթին շատ դիմումատուների դիմել Եվրոպական Դատարան՝ իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

Դատարանը գտել է նաև Կոնվենցիայի 6 § 1 հոդվածի և թիվ 1 Արձանագրություն 1-ին հոդված խախտում՝ դիմումատուների օգտին

կայացված վճիռների երկարաժամկետ չկատարման հիմքով:

Հոդված 41: Դատարանը ի օգուտ դիմումատուների սահմանել է 3,100-ից 9,000 եվրո գումարի չափով ոչ նյութական վնասի փոխհատուցում, ինչպես նաև այլ գումարներ սահմանել դիմումատուներից երեքի օգտին որպես նյութական վնասի փոխհատուցում:

ՀՈԴՎԱԾ 14

Խտրականություն (թիվ 1 Արձանագրություն 1-ին հոդված)


Կաթոլիկական և Ավետարանչական քահանայական գործունեության տարիների հաշվարկային տարբերություն՝ կենսաթոշակի չափը որոշելիս՝ խախտում

Manzanas Martín v. Spain

Գանգատ թիվ 17966/10

Վճիռ 3.4.2012 [III բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուն մինչ թոշակի անցնելը՝ 1952թ.-ի նոյեմբերից մինչև 1991թ.-ի հունիս, ծառայել է Ավետարանչական եկեղեցում որպես քահանա՝ վարձատրվելով այդ տարիներին Ավետարանչական եկեղեցու մշտական հանձնաժողովի կողմից: Մինչդեռ վերջինս չի վճարել քահանայի սոցիալական ապահովության գումար, քանի որ գործող օրենսդրությամբ դա սահմանված չէր: Դիմումատուն մինչ քահանայության ծառայության անցնելը և դրան զուգահեռ աշխատել է նաև բանվոր: Դիմելով սոցիալական ապահովության ազգային ինստիտուտ (INSS) կենսաթոշակի տրամադրման համար նրան մերժում են այն պատճառաբանությամբ, որ նրա անդամավճար մուծելու ժամանակահատվածը չէր բավարարում կենսաթոշակի իրավունքը



ծեռք բերելու համար: Ավելի ուշ նա դատական գործ է սկսել սոցիալական ապահովության ազգային ինստիտուտի (INSS) դեմ, ենթադրելով, որ խտրականության է ենթարկվում Կաթոլիկ եկեղեցու քահանաների համեմատությամբ, քանի որ նրանք կցված են եղել սոցիալական ապահովության ընդհանուր համակարգին: 2005թ.-ի դեկտեմբերին աշխատանքային գործերով դատարանը սոցիալական ապահովության ազգային ինստիտուտը (INSS) պարտավորեցրել է դիմումատուին կենսաթոշակ վճարել՝ հաշվի առնելով այն փաստը, որ ազգային օրենսդիրը տվել է Կաթոլիկ եկեղեցու քահանաներին այդ հնարավորությունը: Դիմումատուն իրավունքի երաշխավորման հայցով (*ampara*) դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան, որը մերժվել է:

Օրենքը: Կոնվենցիայի 14 հոդված՝ համակցված Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով:

ա) *Կիրառելիություն:* Հարկավոր էր բացահայտել, թե արդյոք կենսաթոշակի տրամադրման խնդրահարույց պայմանը չլինելու դեպքում, ներպետական դատարանում դիմումատուի իրավունքը խախտված կճանաչվեր: Դիմումատուն բողոքել էր առ այն, որ գրկված է եղել կենսաթոշակից խտրականության պատճառաբանությամբ՝ ելնելով իր կրոնական դավանանքից: Ըստ ազգային օրենսդրության՝ միայն կաթոլիկ քահանաներն են ենթակա կենսաթոշակի իրավունք ծեռք բերելուն, քանի որ նրանք են լրացրել անդամավճար վճարելու ամենաքիչը տասնհինգ տարի ժամանակահատվածը, ինչը իրավունք էր տալիս կենսաթոշակ ստանալ: Այսպիսով, դիմումատուի նյութական շահերը

ընկել են թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո, այն է՝ գույքից անարգել օգտվելու իրավունք, հանգամանք, որը թույլ կտար Կոնվենցիայի 14-րդ հոդվածի կիրառելիությունը:

բ) **Գործի հանգամանքները:** Դիմումատուն հաստատել է, որ ներպետական օրենսդրությունը այլ կերպ է վարվել և խտրականություն է ցուցաբերել ավետարանչական քահանաներին կաթոլիկ քահանաների համեմատությամբ, վերջիններս ի տարբերություն ավետարանչականների արդեն քսաներկու տարի է ինչ ներառված են եղել սոցիալական ապահովության համակարգում և կարողացել են օգտվել կենսաթոշակ ստանալու իրավունքից: Դատարանը նշել է, որ իսպանական օրենսդրությունում այն բոլոր հնարավորություններից, որոնք տրվել են կաթոլիկ քահանաներին կենսաթոշակները հաշվարկելու նպատակով, որևէ մեկը չի վերաբերել ավետարանչական քահանաներին: Այս նորմատիվ տարբերությունը ի վնաս դիմումատուի հանդիսացել է խտրական վերաբերմունք՝ հիմնված կրոնական դավանանքի վրա, որի հետևանքով դիմումատուն կաթոլիկ եկեղեցու քահանաների համեմատությամբ չի կարողացել կենսաթոշակ ստանալ իր քահանայական գործունեության տարիների համար, մինչև ավետարանչական եկեղեցու սպասավորներին սոցիալական ապահովության համակարգի մեջ ներառելը, որը հաշվի կառնվեր հետագայում կենսաթոշակի գումարի չափը որոշելիս: Չնայած քահանաների սոցիալական ապահովության համակարգ ինտեգրելու ուշացման հետ կապված հարցերը Պետության թույլատրելի հայեցողության

շրջանակի ներքո են գտնվել, այնուամենայնիվ հավասար պայմանների առկայության դեպքում գտնվող քահանաներին տարբեր վերաբերմունքի արժանացնելու հանգամանքը արդարացված չի եղել:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն)

Հոդված 41՝ 3,000 եվրո ոչ նյութական վնասի համար. նյութական վնասի պահանջը հետաձգվել է:

ՀՈԴՎԱԾ 33

Միջպետական հայց

Ռուսական իշխանությունների պաշտոնական վարքագծի ենթադրյալ մոդելը, որը հանգեցրել է Վրաստանի քաղաքացիների Կոնվենցիոն իրավունքների բազմաթիվ խախտումների՝ իրավազորությունից հրաժարում Մեծ Պալատի օգտին

Georgia v. Russia (II)

Գանգատ թիվ 38263/08
[V բաժանմունք]

Ինչպես Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի (I) գործում, որը ներկայումս քննվում է Մեծ Պալատում (գանգատ թիվ 13255/07, նախադեպային տեղեկատվություն թիվ 120 և թիվ 125) գանգատը ներկայացվել է Վրաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև տեղի ունեցած զինված հակամարտության համատեքստում 2008թ.-ի օգոստոսին, երկու երկրների միջև լարված իրավիճակ էր ստեղծվել, ինչպես նաև սադրանքներ և այլ միջադեպեր էին եղել:

Դիմումատու կառավարությունը պնդել է, որ ռուսական ուժերի և նրանց հսկողության տակ գործող անջատողական ուժերի կողմից անհամաչափ և անխտիր հարձակումների ժամանակ հարյուրավոր քաղաքացիներ են վիրավորվել, սպանվել, ձերբակալվել, անհետ կորել, հազարավոր քաղաքացիների գույքը ավիրվել է, 300,000 մարդ ստիպված է եղել լքել Աբխազիան և Հարավային Օսեթիան: Դիմումատուի պնդմամբ, այդ հետևանքները, ինչպես նաև հետաքննության բացակայությունը, գտնվում են Ռուսաստանի պատասխանատվության ներքո՝ Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ և 13-րդ հոդվածներով, Թիվ 1 Արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածներով, ինչպես նաև Թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածով: Դատարանը 2011թ. դեկտեմբերի 13-ի որոշմամբ դիմումը հայտարարել է ընդունելի (տե՛ս նախադեպային տեղեկատու թիվ 147):

ՀՈԴՎԱԾ 35

Հոդված 35 § 1


Ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառում՝ Թուրքիա

Նախադեպային իրավունքի փոփոխություն, որը թույլ է տալիս անձանց անտառային տարածքներին պատկանող իրենց գույքի համար փոխհատուցման հայց ներկայացնել՝ անընդունելի

Altunay v. Turkey

Գանգատ թիվ 42936/07
Որոշում 17.4.2012 [II բաժանմունք]

Փաստերը: 1999թ.-ին դիմումատուի անունով հողային գրանցամատյանում գրանցվել է



գյուղատնտեսական նշանակության համար հատկացված հողակտոր: Սակայն, անտառային գործերով հանձնաժողովը հայց է ներկայացրել դատարան դիմումատուին պատկանող վերոհիշյալ հողը որպես սեփականություն ճանաչած ակտը չեղյալ համարելու և այն որպես պետական սեփականություն ճանաչելու համար՝ այն մեկնաբանությամբ, որ այն հողային գրանցամատյանում գրանցելու պահին պետական անտառների մաս է կազմել: Վճռաբեկ դատարանը, որպես վերջին ատյան 2007թ.-ի մարտի 27-ին հաստատել է առաջին ատյանի կայացված դատական ակտը, այն է՝ չեղյալ համարել դիմումատուի սեփականության վկայականը, ճանաչել այն պետական սեփականություն՝ որպես պետական անտառի մաս:

Օրենքը: Հոդված 35 § 1: *Turgut and Others* վճռից հետո նմանատիպ ևս մոտ քառասուն գործ նույնանման որոշումների են արժանացել՝ չեղյալ համարելով սեփականության վկայականները՝ առանց փոխհատուցում տրամադրելու, ինչն իրենից լուրջ համակարգային խնդիր է ներկայացրել: Բացի այդ, նույն թեմայով հարյուրավոր գործեր Դատարանում դեռևս քննարկման փուլում են: Ներպետական իրավունքի և օրենսդրության վերանայումը առաջ է բերել մասնավոր անձանց փոխհատուցման հարց, անձանց, ովքեր զրկվել են անտառային տնտեսություններին պատկանող իրենց գույքից: Իրոք, այդ գործով Դատարանի կողմից ընդունված Որոշումների արդյունքում 2009թ.-ի նոյեմբերին Վճռաբեկ դատարանը գործել է իր նախադեպային իրավունքին հակառակ՝ մասնավորապես Քաղաքացիական օրենսգրքի 1007-րդ

հոդվածի կիրառման հետ կապված՝ այսպիսով մասնավոր անձանց թույլատրելով անտառային տնտեսություններին պատկանող իրենց գույքի համար ստանալ փոխհատուցում: Վճռաբեկ դատարանը որպես նախադեպ այն կիրառել է նաև իր հետագա բազմաթիվ այլ գործերում: Այնուհետև այն սահմանել է փոխհատուցման հետ կապված հայց ներկայացնելու ժամկետները ինչպես նաև փոխհատուցման ենթակա գումարի հաշվարկման եղանակը: Այսպիսով, գույքի համապատասխան արժեքի փոխհատուցման մասին հայց կարող էր ներկայացվել տաս տարվա ընթացքում սկսած այն պահից, երբ անձանց սեփականության իրավունքից զրկելու որոշումը մտել էր օրինական ուժի մեջ: Այսուհետ այս միջոցը կանոնավոր կիրառվել է: Համապատասխանաբար, փոխհատուցման հայցի հետ կապված այս դրույթը պետք է բավարար աստիճանի որոշակիություն մտցնել 35 § 1 հոդվածի պահանջները բավարարելու համար: Պետք էր պարզել, թե արդյոք դիմումատուն, ում սեփականության վկայականը չեղյալ էր համարվել 2007թ.-ի մարտի 27-ին, կարող էր օգտվել այս օրենսդրական բարեփոխումից՝ փոխհատուցման հայց ներկայացնելու համար, այն պարագայում, երբ ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման ժամկետը որպես կանոն հաշվարկվել է դիմումը Դատարան ներկայացնելու ժամկետով: Մինչդեռ այս կանոնը ենթակա էր նաև որոշ բացառությունների: Սույն գործում, հարկավոր է շեղվել ընդհանուր ընդունված սկզբունքներից՝ հաշվի առնելով Դատարան մուտք եղած համանման գործեր կազմող մեծ թվաքանակը, որը ամենայն

հավանականությամբ կարող էր կուտակումներ առաջացնել և այդպիսով թուլացնել Կոնվենցիայով նախատեսված պաշտպանական համակարգի գործունեությունը: Հետևաբար, դիմումատուն փոխհատուցման վերաքննության հայցը կարող էր ներկայացնել 2007թ.-ի մարտի 27-ից սկսած տասը տարվա ընթացքում: Հաշվի առնելով այս նկատառումները, Դատարանը գտել է, որ ըստ 35 § 1 հոդվածի դիմումատուն իր սեփականության իրավունքը չեղյալ ճանաչելու պատճառով փոխհատուցման համար հայց կորող էր ներկայացնել ներպետական դատական ատյաններ 2007թ.-ի մարտի 27-ից սկսած տաս տարվա ընթացքում:

Եզրակացություն՝ անընդունելի (ներպետական իրավական պաշտպանության միջոցներ չսպառելը):

Հոդված 35 § 3

Դատարանի իրավասությունը կապված իրավախախտման ժամանակային գործոնի հետ

Պատասխանող երկրում Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 58 տարի առաջ մահվան դեպքերի նկատմամբ Դատարանի ժամանակավոր իրավասությունը՝ ընդունված նախնական առարկություն

Janowiec and Others v. Russia

Գանգատ թիվ 55508/07 և 29520/09
Վճիռ 16.4.2012 [V բաժանմունք]

(Տե՛ս վերը Հոդված 3, էջ 7)

Բողոք ներկայացնելու իրավունքի չարաշահում

Դատարանում բացատրություններ և գործին առնչվող կարևոր տեղեկություններ տալու դիմումատուի ներկայացուցիչների անգործությունը՝ հաստատված նախնական առարկություններ

Bekauri v. Georgia

Գանգատ թիվ 14102/02

Վճիռ (նախնական առարկություններ)
10.4.2012 [II բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուն ոստիկանի սպանության մեղադրանքով դատապարտվել է ցմահ ազատազրկման: 2005թ.-ին հայցին ծանոթանալուց հետո, նրա փաստաբանը, չի ներկայացրել որևէ նկատառում՝ հաշվի չառնելով նույնիսկ այդ նպատակով իրեն հատկացված ժամկետի երկարացումը: Նույնիսկ 2006թ.-ին դիմումատուի կողմից նոր փաստաբաններ նշանակելուց հետո նույնպես չեն ներկայացվում նկատառումներ:

2010թ.-ին, երբ գործը հայտարարվել է ընդունելի, Կառավարությունը Դատարանին տեղեկացրել է, որ դիմումատուի պատիժը փոխարինվել է 16 տարի ազատազրկմամբ:

Օրենքը: Հոդված 35 § 3 (ա): Դատարանի Կանոնակարգի 47 § 6 Կանոնի համաձայն դիմումատուն պետք է Դատարանին կանոնավոր կերպով տեղեկացներ իր գործի վերաբերյալ յուրաքանչյուր փաստի մասին:

Գանգատները կարող էին մերժվել, որպես չարաշահվող, եթե դրանք գիտակցաբար հիմնված են եղել կեղծ փաստերի, սուտ կամ թերի տեղեկատվության վրա: Դիմումատուի առաջին ներկայացուցչի վարքագիծը անընդունելի է եղել, այն առումով, որ նա ոչ միայն չի ներկայացրել իր դիտարկումները

գործի ըստ էության հանգամանքների, ինչպես նաև՝ ընդունելիության առնչությամբ, այլ նաև երկու անգամ գործի փաթեթից փաստաթղթեր է կորցրել և չի համագործակցել դիմումատուի նոր ներկայացուցիչների հետ: Թերացումների ամբողջությունը Դատարանի համար անօգուտ աշխատանքի առիթ է հանդիսացել: Դիմումատուի նկատմամբ ներկայացուցչի անփույթ վերաբերմունքը իր գազաթնակետին է հասել այն ժամանակ, երբ դիմումատուի ցմահ ազատազրկման պատժի փոխարինման մասին Դատարանին տեղեկություն չի տրամադրվել, փաստ, որը կապված էր դիմումի բուն էությանը: Ինչ վերաբերում է դիմումատուի նոր ներկայացուցիչներին, ապա Դատարանը չի կարող ընդունել, որ նրանք չեն իմացել, որ, ինչպես իրենք են պնդում, 2010թ.-ի մայիսի վերջին Դատարանին հայտնի դարձած իրենց վստահորդի պատժի փոխարինումը տեղի է ունեցել 2007թ.-ին: Ամեն դեպքում նման կարևոր տեղեկատվությունը Դատարանին հայտնելը դիմումատուի և նրա ներկայացուցիչների շահերից է բխել, մինչդեռ վերջիններս չեն կատարել այն: Դատարանը հանգել է նրան, որ դիմումատուի, մասնավորապես՝ նրա առաջին ներկայացուցչի վարքագիծը, դիտվել է որպես՝ «անպատասխանատու վերաբերմունքի անհանգստացնող ցուցաբերում», որն անհամատեղելի է եղել Կոնվենցիայով երաշխավորված անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի հետ: Այս վարքագիծը իր էական ազդեցությունն է ունեցել նաև Դատարանի բնականոն գործունեության վրա: Դատարանը նշել է, որ փաստաբանները պետք է մասնագիտական մեծ զգուշավորություն և Դատարանի հետ

կառուցողական համագործակցություն ցուցաբերեն՝ խնայելով անհիմն դիմումների մուտքը դատարան և մանրակրկիտ կերպով հետևեն ընթացակարգին գանգատի ընդունումից հետո:

Եզրակացություն՝ նախնական առարկության հաստատում(գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում):

ՀՈԴՎԱԾ 35 § 3 (բ)

Ոչ էական վնաս

Գլխավոր դատախազության կարծիքը

Վարչական դատարանում

բողոք բերած անձին տեղեկացնելու

ձախողումը՝ անընդունելի

Liga Portuguesa de Futebol Profissional v. Portugal

Գանգատ թիվ 49639/09

Որոշում 3.4.2012 [II բաժանմունք]

Փաստերը: Հարկային մարմիններին պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբների կողմից գումարները չվճարելուց հետո, պայմանագիր է կնքվել դիմումատու կազմակերպության, պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցաշարի կազմակերպչի և Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ: Պայմանագրի դրույթներից մեկի համաձայն, եթե ակումբների կողմից հարկային մարմիններին վճարվող գումարները բավարար չէին լինի փակելու պարտքի գումարի կեսը, ապա դիմումատու կազմակերպությունը և ֆեդերացիան կպարտավորվեին վճարել գումարի մնացած մասը: 2004թ.

դեկտեմբերին հարկային մարմինները տեղեկացրել են դիմումատու կազմակերպությանը, որ այն պարտավորվում էր վճարել մոտավորապես քսան միլիոն եվրո գումար: 2005թ. ապրիլին դիմումատու կազմակերպությունը հայց էր ներկայացրել Կենտրոնական վարչական դատարան պայմանագրի այդ դրույթը չեղյալ ճանաչելու պահանջով: Դիմումատու կազմակերպության հայցը մերժվել էր 2006թ. նոյեմբերին և այն վերաքննիչ բողոք էր ներկայացրել Գերագույն վարչական դատարան: 2007թ. մարտին Գերագույն վարչական դատարանում գլխավոր դատախազի ներակայացուցիչը եզրակացրել է, որ վերաքննիչ բողոքը անհիմն է եղել: Դիմումատու կազմակերպությանը վերոհիշյալի մասին ծանուցում չի ուղարկվել: 2007թ. մայիսին Գերագույն վարչական դատարանը բողոքը մերժել է: Դատավճռից տեղեկանալով Գլխավոր դատախազի ներկայացուցչի կարծիքի մասին, դիմումատու կազմակերպությունը հայց է ներկայացրել դատավճիռը՝ արդար դատաքննության սկզբունքը խախտելու հիմքով անավավեր ճանաչելու մասին: Դիմումը այնուհետև մերժվել է նաև Սահմանադրական դատարանում: Եվրոպական դատարան ներկայացրած իր գանգատի մեջ, դիմումատուն բողոքել է մրցակցային դատավարության սկզբունքի խախտման առնչությամբ, այն հիմնավորմամբ, որ իրեն չեն տրամադրել Գերագույն վարչական դատարանում գլխավոր դատախազի ներկայացուցչի կարծիքը:

Օրենքը: Հոդված 35 § 3 (բ): Հարկային մարմինների կողմից պահանջված գումարը, որն հետագայում հիմք էր հանդիսացել դատական գործընթացների համար, չէր

կարող դիտվել որպես «վնաս» 35§ 3 (բ) հոդվածի դրույթներին համապատասխան: Հարցն այն էր, թե արդյոք Գլխավոր դատախազի ներկայացուցչի կարծիքը ծանուցելու ձախողումը կարող էր պատճառ հանդիսանալ դիմումատու կազմակերպության կողմից էական վնաս կրելու համար: Այս հակիրճ կարծիքի մեջ ընդամենը դրվել էր այն, որ խնդրո առարկա հանդիսացող որոշումը ճիշտ էր մեկնաբանել կիրառման ենթակա օրենքը: Որևէ այլ նոր հարց դիմումատուի կողմից չի բարձրացվել, որը կարող էր մեկնաբանության կարիք ունենալ: Դիմումատու կազմակերպությունը չէր կարող ներակայացնել որևէ նոր և գործին առնչվող նյութեր ի պատասխան այդ կարծիքի, որոնք իրենց հերթին հիմք կհանդիսանային գործը ուսումնասիրելու համար: Ասպիսով, դիմումատու կազմակերպությունը չի կրել որևէ էական վնաս, խնդրո առարկա հանդիսացող դատավարության իր մասնակցության իրավունքը իրացնելիս:

Պատասխանող պետությունը նախաձեռնել է ընդհանուր միջոցներ երաշխավորելու համար կողմերին Գլխավոր դատախազության եզրակացությունը տրամադրելու համար: Այդպիսի հանգամանքների առկայության պայմաններում և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանը տարբեր առիթներով տվյալ գործում բարձրացված հարցի առնչությամբ հայտնել է իր տեսակետը, չէր կարող դիտվել, որ դիմումատուն Դատարան ներկայացրած գանգատում Կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանման կամ ներպետական օրենսդրության հետ կապված կարևոր հարցեր էր առաջ քաշել: Հետևաբար, մարդու

իրավունքների հարգանքից ելնելով չի պահանջվում գանգատի քննություն:

Դիմումատու կազմակերպության առարկությունները կապված իր մասով խնդրո առարկա հանդիսացող ընթացակարգի կիրառումից բխող իրավունքների ու պարտականությունների հետ, ըստ էության քննության առարկա են հանդիսացել երեք ներպետական դատական ատյաններում: Բացի այդ, այն դրույթը, որը սահմանում է գործի պատշաճ կարգով քննվելու հանգամանքը, չէր կարող ենթարկվել այնպիսի բացարձակ մեկնաբանման, ինչպես արդար դատաքննության դրույթը, քանի որ 35§ 3 (բ) հոդվածը չի պարունակել այնպիսի նորմ, ինչպիսին է «արդար քննության առնվելը»: Հետևաբար, դիմումատուի գործը պատշաճ կարգով քննված է եղել:

Եզրակացություն՝ անընդունելի (ոչ էական վնաս):

ՀՈՂՎԱԾ 46

Պիլոտային վճիռ՝ ընդհանուր բնույթի միջոցառումներ

Պատասխանող պետությունից պահանջվել է մեկ տարվա ընթացքում ապահովել քրեական դատարաններում դատավարությունների տևողության համար իրավական պաշտպանության միջոց

Michelioudakis v. Greece

Գանգատ թիվ 54447/10
Վճիռ 3.4.2012 [I բաժանմունք]

Փաստերը: 2003թ. փետրվարին դիմումատուի նկատմամբ քրեական վարույթ է


հարուցվել սուտ վկայություն տալուն դրդելու փաստով: 2006թ. փետրվարին քրեական գործերով դատարանը մեղավոր է ճանաչել և դատապարտել նրան քսան երկու ամսվա ազատազրկման: Դիմումատուն բողոք էր ներկայացրել: 2007թ. մարտին վերաքննիչ դատարանը կրճատել է պատժի ժամկետը՝ հասցնելով այն մինչև ինը ամիս: 2007թ. մայիսին դիմումատուն բողոք է ներկայացրել վճռաբեկ դատարան: 2008թ. նոյեմբերին վճռաբեկ դատարանը վճիռը անվավեր է ճանաչել և գործը վերադարձրել վերաքննիչ դատարան: 2009թ. մարտին վերաքննիչ դատարանը կրճատել է պատժի ժամկետը մինչև յոթ ամիս: 2009թ. սեպտեմբերին դիմումատուն բողոքարկել է վճիռը վճռաբեկ դատարանում, որն էլ 2010թ. մարտին որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին:

Օրենքը: 6§1 հոդված: Քանի որ այս գործով փաստական կամ իրավական բարդ խնդիրներ առաջ չեն քաշվել, Դատարանը գտել է, որ դատավարության ընդհանուր տևողությունը (յոթ ամսից ավելին) չափազանց երկար է եղել և չի համապատասխանել «ողջամիտ ժամկետ»-ի պահանջին:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):

13-րդ Հոդված: Չի հիմնավորվել այն հանգամանքը, որ իրավական պաշտպանության միջոցը, որը դիմումատուն կարող էր օգտագործել վարչական դատարանում, տեսական և գործնական տեսանկյունից արդյունավետ և մատչելի է եղել:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):



46-րդ հոդված

ա) *Պիլոտային վճռի ընթացակարգի կիրառումը:*

Մինչև սույն գործը Դատարան ներկայացնելը, վերջինիս կողմից բազմաթիվ վճիռներ են կայացվել, ինչը խոսում էր Հունաստանում քրեական գործերով դատավարությունների չափազանց երկար ձգվելու խնդրի մասին: Հաշվի առնելով խնդրի խրոնիկական և տևական բնույթը, ինչպես նաև Հունաստանում մարդկանց մեծաթիվ քանակը, ովքեր տուժել են դրանից, գումարած այն հանագամանքը, որ անհրաժեշտ է արագ և համապատասխան իրավունքների վերականգնման միջոց տրամադրել ներպետական մակարդակում շահագրգիռ անձանց, Դատարանը նապատակահարմար է գտել այս գործով կիրառել պիլոտային վճռի ընթացակարգը:

բ) *Արդյո՞ք առկա էր Կոնվենցիային հակասող պրակտիկա:*

Հունաստանի իրավական համակարգի թերությունը կապված դատավարությունների անհիմն ձգձգումների հետ, ինչը հաստատվել էր *Vassilios Athanasiou and Others* վճռում, չի սահմանափակվել միայն այդ կատեգորիայի գործերով, այլ ընդհանրապես արտացոլել է համակարգային խնդիրը կապված չափից երկար դատավարությունների հետ նաև քրեական գործերով: Այդ կապակցությամբ, չնայած բազմաթիվ ջանքերին արված ներպետական մակարդակում օրենսդրության տեսանկյունից, Հունաստանի իրավական համակարգը դեռևս չէր սահմանել այն իրավական պաշտպանության միջոցը կամ դրանց փաթեթը, որը հնարավորություն կտար այն անաճց, ում նկատմամբ քրեական մեղադրանք էր առաջադրվել, իրագործել

ողջամիտ ժամկետում իրենց գործը լսելու իրավունքը: 2007թ. Միջանկյալ Բանաձևն ընդունելուց սկսած, Դատարանը 40-ից ավել վճիռ է կայացրել, որոնցով 6§1 հոդվածի խախտում է ճանաչել քրեական դատավարության տևողության հիմքով, այն է՝ կամ առաջին ատյանում երկար տևողությամբ դատավարությունների կամ՝ վերաքննիչ բողոքները լսելու ժամկետների էական ձգձգումների: Դատարանը նաև 13-րդ հոդվածի բազմաթիվ խախտումներ է հայտնաբերել ողջանիտ ժամկետներում դատական պաշտպանության արդյունավետ միջոցի մատչելիության բացակայության հիմքով: Բացի այդ, 250-ից ավել դատավարության տևական լինելու հիմքով գործեր ընթացիկ փուլում են եղել Դատարանի վարույթում, որոնցից 50-ը բացառապես վերաբերել է քրեական գործերով վարույթներին: Վերը նշվածի լույսի ներքո տվյալ իրավիճակը պետք է գնահատվեր որպես պրակտիկա, որը համատեղելի չէր Կոնվենցիայի դրույթների հետ:

գ) *Ընդունման ենթակա ընդհանուր բնույթի միջոցառումներ:*

Չնայած բացարձակ իմաստով իրավական պաշտպանության լավագույն միջոցը դա կանխարգելումն էր, այդ իմաստով ընթացիկ վարույթները՝ չափազանց երկար ձգվելուց խուսափելու նպատակով, արագացված ճանապարհով դրանց իրականացումը այդ խնդրի ամենարդյունավետ լուծումը կհանդիսանար: Չնայած իրավական այլ միջոցների ընդունումը նույնպես հասկանալի էր, օրինակ փոխհատուցման միջոցի օգտագործումը կամ չափազանց երկար տևած քրեական վարույթների հիմնավորմամբ պատժի ժամկետի կրճատումը:

Համապատասխանաբար, չնայած այն հանգամանքին, որ Հունաստանը ջանքեր չի խնայել բարելավելու իր դատական համակարգը, Դատարանը գտել է, որ ազգային իշխանությունները մի տարվա ընթացքում, պետք է ընդունեին արդյունավետ իրավական պաշտպանության միջոց կամ դրանց փաթեթը, որն ընդունակ կլիներ բավարար և համապատասխան կերպով վերականգնել խախտված իրավունքները՝ կապված վարույթների տևողության անհարկի ձգձգումների հետ:

դ) Նմանապիսի գործերով ընթացակարգին հետևելը:

Մինչև Հունաստանի իշխանությունների կողմից անհրաժեշտ դրույթների ընդունումը, այն վարույթները, որոնք բացառապես վերաբերել են դատավարությունների տևողությանը, պետք է հետաձգվեին մեկ տարի ժամկետով սույն վճռի վերջնական դառնալու օրվանից սկսած: Դա չպետք է վնասեր Դատարանին իր վարույթում գտնվող գործերի ողջամիտ ժամկետում քննություն իրականացնելու համար:

41-րդ Հոդված՝ 3,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Ընդհանուր միջոցառումներ

Օրենքները կատարելու Պատասխանող Պետության պարտավորությունը՝

Կոսովոյում ապահովագրված անձանց կենսաթոշակի վճարման երաշխավորման համար

Grudić v. Serbia


Գանգատ թիվ 31925/08
Վճիռ 17.4.2012 [II բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուները սերբիացի երկու քաղաքացիներ են, ովքեր հաշմանդամության թոշակ են ստացել Սերբիական Կենսաթոշակների և Հաշմանդամության Ապահովագրության հիմնադրամի («Հիմնադրամ») Կոսովոյի մասնաճյուղից: Նրանք, մինչև 1999թ.-ի հունիս և 2000թ.-ի հունվար ամիսը, համապատասխանաբար, կանոնավոր կերպով ստացել են ամենամսյա վճարումներ, որն ընդհատվել էր առանց որևէ բացատրության: 2004թ.-ի մայիսին և 2005թ.-ի մարտին հիմնադրամը պաշտոնապես որոշել է դադարեցնել դիմումատուների կենսաթոշակի վճարումը՝ սկսած այն ամսաթվից, երբ դրանք դադարեցվել էին վճարվել, այն պատճառաբանությամբ, որ Կոսովոն գտնվում է միջազգային վարչարարության ներքո:

2006թ.-ին շրջանային դատարանը չեղյալ է համարել Հիմնադրամի որոշումները, մասնավորապես ընդգծելով, որ այն չի բխել համապատասխան օրենսդրությունից: Գերագույն դատարանը մերժել է Հիմնադրամի վերաքննիչ բողոքը: 2008թ.-ին Հիմնադրամը որոշում է կայացնում դադարեցնել դիմումատուների դեմ տարվող գործընթացը՝ նախատեսելով վերսկսել կենսաթոշակի փոխանցումը մինչև սերբական իշխանությունների և Կոսովոյի միջազգային վարչախմբի միջև հարցի լուծումը:

Օրենքը: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված: Դիմումատուների թոշակների փոխանցման դադարեցումը նախատեսված չէր ներպետական համապատասխան օրենսդրությամբ:

Եզրակացություն՝ խախտում (միաձայն):



Հոդված 46. Հաշվի առնելով հավանական դիմումատուների մեծ թվաքանակը, պատասխանող Կառավարությունը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռք առներ, որպեսզի վերահսկի սերբական իշխանությունների կողմից կիրառելու համապատասխան օրենքները, ինչը կապահովեր խնդրո առարկա թոշակների և կուտակված պարտքերի վճարումը՝ նախատեսելով, որ կարող էր առաջանալ որոշ փաստացի և/կամ վարչական ստուգման գործընթացներ իրականացնելու անհրաժեշտությունը:

Պատասխանող պետության պարտավորությունը ձեռնարկել միջոցառումներ հանրային հողի վերականգմանն ուղղված հրամանների կատարման ընթացքում համաչափության երաշխավորման համար

Yordanova and Others v. Bulgaria

Գանգատ թիվ 25446/06

Վճիռ 24.4.2012 [IV բաժանմունք]

(Տե՛ս վերը Հոդված 8, Էջ 20)

ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾ

Գույքը

Եվրոպական միության անդամ պետություններից ներմուծված օգտագործված մեքենաների օդի աղտոտման հարկի սահմանում՝ անընդունելի


Iovăţoni and Others v. Romania

Գանգատ թիվ 57583/10, 1245/11 և 4189/11

Որոշում 3.4.2012 [III բաժանմունք]

Փաստերը: Դիմումատուները, Ռումինիայում ցանկանալով Եվրամիության երկրներից ձեռք բերած ավտոմեքենա գրանցել, ստիպված են եղել մուծել օդի աղտոտման հարկ՝ նախատեսված Կառավարության թիվ 50/2008 Արտակարգ Կարգադրությամբ: Գրանցման համար նախատեսված մուծումը կատարելուց հետո, վերջիններս դատական գործ են սկսում այդ հարկի վերադարձման պահանջով՝ թիվ 50/2008 կարգադրությունը ուղղակիորեն ռումինական իրավունքում կիրառելը համարելով Եվրամիության օրենսդրությանը հակասող, մասնավորապես Եվրոպական Միության գործունեության մասին պայմանագիր (TFEU)) 110-րդ հոդվածին, քանի որ այն հատկապես տարածվում էր ներմուծված մեքենաների վրա: Ներպետական դատարաններում դիմումատուների հարկի վերադարձման պահանջով հայցերը մերժվել են:

Օրենքը: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված: Բոլորը պետության դեմ՝ գույքի անհարկի գանձվող հարկի դեմ Մասնավորապես, երբ նման հարկը գանձվել է Եվրամիության օրենքի խախտմամբ, կարող է խնդիր ծագել Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի տեսանկյունից (տե՛ս *S.A. Dangeville v. France*, թիվ 36677/97, 16 ապրիլ 2002, նախադեպային տեղեկատու թիվ 41): Սույն գործում Դատարանը պետք է պարզեր, թե արդյոք օդի աղտոտման հարկման դեմ ներպետական դատարաններում վարույթ սկսելու ժամանակ դիմումատուները ներկայացրել են «գանազատ, որը բավարար կերպով հաստատվել է», Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի



պահանջներին համապատասխան, և որը 2011թ.-ի ապրիլի 7-ի Եվրոպական Միության արդարադատության Դատարանի (գործ C-402/09) Tatu որոշմամբ համարվել է անուղղակի խտրականություն:

Ներպետական դատարանները, որոնք իրենց վերջնական որոշումները կայացրել էին մինչ վերոհիշյալ Որոշումը, բացասական պատասխան էին տվել այս հարցին:

Ինչպես հաստատել է CJEU-ն, Եվրոպական Միության իրավունքի կիրառելի դրույթը TFUE-ի 110-րդ հոդվածն է, որի «նպատակն էրնորմալ մրցակցության պայմաններում ապահովելու Անդամ Պետություններում ապրանքների ազատ տեղաշարժը և պաշտպանելու բոլոր Անդամ Պետություններից ներմուծված ապրանքների ներպետական անհարկի հարկումներից՝ բացառելով խտրականությունը»: Խոսքը գնում է ավելի լայն կիրառության նորմի մասին քան *S.A. Dangeville* գործն է, որում ներկայացվել է կոնկրետ առևտրային գործունեության ԱԱՀ /ավելացված արժեքի հարկից ազատումը:

Ճիշտ է, որ ԵՄԱԴ-ը (Եվրոպական Միության Արդարադատության Դատարան) մեկնաբանություն է տալիս Եվրոպական Միության իրավունքի կարգի վերաբերյալ, բացահայտում և հստակեցնում է այդ կարգի նշանակությունը և գործածությունը, ինչպիսին այն պետք է ընկալվեր և կիրառվեր այն ուժի մեջ մտնելու պահից սկսած: Այնուամենայնիվ Tatu որոշումից առաջ, ազգային դատարանների պրակտիկան ոչ միանշանակ է եղել այն հարցի շուրջ, թե արդյոք կառավարության հատուկ կարգադրությունը համապատասխանել է, թե ոչ ապրանքների ազատ տեղաշարժման սկզբունքին:

Սրանից հետևում է, որ այս իրավական հարցի պատասխանը ակնհայտ չի եղել, փաստ, որը Եվրամիության արդարադատության Դատարանի միջամտության անհրաժեշտությունն է առաջ բերել:

Հետևաբար, Դատարանը կարող է դժվարությամբ ընդունել այն, որ մինչ 2011թ.-ի ապրիլի 7-ը դիմումատուները իրենց բողոքը կազմել էին պարզ, հստակ և ուղղակիորեն կիրառելի Եվրոպական համայնքների իրավունքից բխող նորմի հիման վրա: Բացի բացահայտ կամայականության հանգամանքի լինել չլինելու հարցը, Դատարանը չէր կարող գործ ունենալ ներպետական դատարանների կողմից թույլ տրված իրավունքի սխալների հետ, ում սկզբնապես պատկանել է իր օրենքը մեկնաբանելու և կիրառելու իրավունքը:

Այսպիսով, ոչինչ Դատարանին թույլ չի տալիս եզրակացնել, որ սույն գործում, դիմումատուների կողմից քննադատվող որոշումները, ակնհայտորեն ողջամիտ և կամայական չէին: Սրանից հետևում է, որ թիվ 1-ի Արձանագրության հոդված 1-ը կիրառելի չէ.

Եզրակացություն՝ անընդունելի (անհամատեղելի, իրավախախտման օբյեկտի գործոնի առումով)

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը համակցված թիվ 1 Արձանագրության 1-ին և հոդվածի հետ. ինչ վերաբերում է ենթադրյալ խտրականությանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուները չեն կարող համարվել որպես «գույքի» սեփականատեր կամ «բավարար հիմքով բողոք ունեցողներ» Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն ընդունելի համարվելու համար, այսպիսի դիմումների վերը նշված հանգամանքը Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ համակցված

թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով քննության առարկան չէր կարող հանդիսանալ:

Եզրակացություն՝ անընդունելի (անհամատեղելի, իրավախախտման օբյեկտի գործոնի առումով):

Դրական պարտավորություն Սեփականության իրավունքից զրկում

**Սնանկության գործով կառավարչի կողմից
մասնավոր բանկի ակտիվների
անօրինական բաշխումը. խախտում չկա**

Kotov v. Russia

Գանգատ թիվ 54522/00
Վճիռ 3.4.2012 [ՄՊ]

Փաստերը: Դիմումատուն ավանդային հաշիվ ուներ մասնավոր բանկում, որը 1995թ.-ին սնանկացավ: Որպես առաջին կարգի պարտատեր նա բանկի ակտիվներից վճարման իրավունք ուներ այլ կարգի պարտատերերից առաջ *pro rata* իր պահանջի արժեքի: Սակայն, բանկի պարտատերերի ընդհանուր ժողովը ստեղծեց առաջին կարգի անդամներից «առաջնային հերթի» պարտատերերի հատուկ խումբ (որը ընգրկում էր հաշմանդամներին, մարտական վետերաններին, կարիքավորներին և նրանց, ով ակտիվորեն մասնակցել էր լուծարման գործընթացին), ով կստանար իրենց պահանջների լրիվ փոխհատուցում առաջին կարգի այլ պարտատերերից առաջ: Որպես արդյունք, բանկի գրեթե բոլոր ակտիվները օգտագործվեցին «առաջնային հերթի» պարտատերերին ամբողջությամբ

փոխհատուցելու նպատակով, մինչդեռ դիմումատուն ստացավ իր պահանջի մեկ տոկոսից պակաս: 1998թ.-ի ապրիլին դիմումատուն վարույթ սկսեց, որտեղ նա վիճարկեց ակտիվների բաշխման եղանակը: Չնայած որ դատարանները գտան, որ տեղի է ունեցել օրենքի խախտում և կարգադրեցին սնանկության գործով կառավարչին շտկել իրավիճակը, դիմումատուն անկարող էր իրականացնել վճիռը բանկի ակտիվների բացակայության պատճառով: 1999թ.-ին դիմումատուն անձամբ սնանկության գործով կառավարչի դեմ վնասի փոխհատուցման հայց ներկայացրեց, սակայն հայցը մերժվեց այն հիմքով, որ, առաջինը՝ ընդհանուր իրավասության դատարանի փոխարեն այն ներկայացվել էր առևտրային դատարան և, երկրորդը՝ այն ներկայացվել էր մինչ բանկի լուծարվելը և, այսպիսով, կարող էր հանգեցնել վնասների չափը գերազանցող կորուստների գանձման վտանգին, եթե դիմումատուի երկու հայցն էլ բավարարվեին: 2010թ.-ի հունվարի 14-ի վճռում (*տե՛ս* թիվ 126 նախադեպային տեղեկատվությունը) Դատարանի Պալատը՝ գտնելով, որ սնանկության գործով կառավարչի գործողությունները ներառում են պետության պատասխանատվությունը և որ դիմումատուն անօրինական զրկվել էր իր սեփականությունից, միաձայն որոշեց, որ տեղի է ունեցել Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Օրենքը: Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված:

(ա) Ընդունելիությունը – Ժամանակային իրավասությունը: Բանկի ակտիվների բաշխումը «առաջնային հերթի» պարտատերերի միջև անհապաղ

գործողություն էր, որը տեղի էր ունեցել մինչ 1998թ-ի մայիսի 5-ը, երբ Ռուսաստանը վավերացրել էր Կոնվենցիան: Հետևաբար, այն Դատարանի *ratione temporis* իրավասությունից դուրս է: Սակայն դիմումատուն, այնուամենայնիվ, վնասի հատուցման հայց էր ներկայացրել, երբ Ռուսաստանը վավերացրել էր Կոնվենցիան և այդ հայցը վերապրել է սկզբնական իրավախախտումը: Հիմնական հարցը կայանում էր նրանում, թե ինչու Կոնվենցիայի վավերացումից հետո իրավունքների վերականգման իր փորձը ձախողվել էր: Դատարանը, հետևաբար, ժամանակային իրավասություն ունի ուսումնասիրելու, թե արդյոք նրա իրավունքները պատշաճ կերպով երաշխավորված էին Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երկու՝ (1998թ. և 1999թ.) դատավարությունների ընթացքում (*Broniowski v. Poland*³):

Եզրակացություն՝ ընդունելի է (վեց ծայն ընդդեմ մեկի):

(բ) *Ըստ էության քննությունը* – Ընդհանուր սկզբունք է, որ դատարանի սկզբնական որոշումը հավասարեցվում էր դիմումատուի «սեփականությանը», որ սնանկության գործով կառավարիչը, չբաշխելով բանկի ակտիվները կարգի համաձայն, գործել էր անօրինական և որ դիմումատուն ստացել էր ավելի քիչ, քան նա կարող էր օրինականորեն ակնկալել: Նա, այսպիսով, գրկվել էր իր սեփականությունից սնանկության գործով կառավարչի անօրինական գործողության պատճառով:

³ *Bronowski v. Poland* (որոշում) [Մեծ պալատ], թիվ 31443/96, 2002թ-ի դեկտեմբերի 19, թիվ 50 նախադեպային տեղեկատվություն:

(1) *Պեքական պաշտոնատար անձը*. Հարց է ծագում, այնուամենայնիվ, արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը գործում էր որպես պետական պաշտոնատար անձ կամ ինչպես կառավարությունն է հայտարարում, որպես անհատ, ինչը չի առաջացնում պետության պատասխանատվությունը: Մինչ քննարկվող ժամանակահատվածում ներպետական օրենքը սահմանում էր, որ սնանկության գործով կառավարիչը չի հանդիսանում պաշտոնատար անձ, անհրաժեշտ էր պարզել, թե արդյոք այդ պաշտոնական կարգավիճակը համապատասխանում է լուծարման ընթացքի իրականությանը, անրադառնալով սնանկության գործով կառավարչի պաշտոնի նշանակման եղանակին, հսկողությանը և հաշվետու լինելուն, նպատակներին, իրավասություններին և պաշտոնական պարտականություններին:

Այդ ժամանակահատվածում Ռուսաստանում սնանկության գործով կառավարիչները բաց շուկայում պարտատերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվող անհատ մասնագետներ էին՝ անձնական շահի հետապնդող, ազատորեն սահմանվող վճարումներ կատարող միավորում էին: Չնայած որ դատավորից պահանջվում էր հաստատել պարտատերերի ընդհանուր ժողովի կողմից սնանկության գործով կառավարչի պաշտոնի նշանակումը՝ իր դերը պարզապես կայանում էր հաստատելու մեջ, որ սնանկության գործով կառավարիչը համապատասխանում է չափանիշներին և իր պարտավորությունները կատարելու համար չի առաջացնում որևէ պետության պատասխանատվությունը: Սնանկության գործով կառավարիչները հաշվետու են միայն պարտատերերի ընդհանուր ժողովին կամ անհատ

պարտատերերին, այլ ոչ թե որևէ կարգավորող մարմին: Իրենք չէին ստանում որևէ պետական ֆինանսավորում: Ներպետական դատարանները ունեին միայն սնանկության կանոններին համապատասխանությանը վերանայման սահմանափակ իրավասություն և իրավասու չէին հաստատել, թե արդյոք սնանկության գործով կառավարչի որոշումները արդարացված էին տնտեսության և ձեռնարկատիրության հեռանկարից: Հիմնականում, իրենց դերը համարյա նույնն էր, ինչպես որևէ այլ մասնավոր վեճում: Ինչ վերաբերում է նպատակներին, ապա սնանկության գործով կառավարչի առաջադրանքը նման էր մասնավոր գործարարների առաջադրանքին: Միայն այն փաստը, որ իր ծառայությունները նույնպես կարող էին լինել հանրագուտ, իրեն չի դարձնում հանրային շահի համար գործող պետական պաշտոնյա: Ինչն ավելի կարևոր է՝ սնանկության գործով կառավարչի իրավասությունները սահմանափակված էին գործառնական կարգավորմամբ և անվճարունակ ընկերության սեփականության կառավարմամբ: Բացակայում էր որևէ պաշտոնական լիազորությունների փոխանցման փաստ որևէ պետական մարմնի կողմից: Ի տարբերություն հարկադիր կատարողի, սնանկության գործով կառավարիչը երրորդ անձի նկատմամբ չունեւ հարկադրական կամ կարգավորող իրավասություն: Քննարկվող ժամանակահատվածում, հետևաբար, սնանկության գործով կառավարիչները օգտվում էին գործառնական և կառուցվածքային անկախության էական աստիճանից: Պետության ներգրավումը սահմանափակված էր պարտատերերի

ընդհանուր ժողովի և սնանկության գործով կառավարիչների պարտականությունների և իրավասությունների սահմանմանը ուղղված օրենսդրության սահմանափակման ստեղծմամբ և կանոնների պահպանման հսկողությամբ: Սնանկության գործով կառավարիչը սույն գործում, հետևաբար, չէր գործում որպես պետական պաշտոնատար անձ, և պատասխանող պետությունը լիովին չէր կարող պատասխանատու լինել նրա սխալ գործողությունների համար:

(2) Դրական պարտավորությունները. Սնանկության գործով կառավարչի իրավախախտումը լուրջ էր և տեղի էր ունեցել այն ոլորտում, որտեղ պետության անզգուշությունը թերի աշխատանքի և խարդախության դեմ պայքարում կարող էր ունենալ կործանարար ազդեցություն տնտեսության վրա՝ վնաս հասցնելով մեծ թվով գույքային իրավունքներին: Պետությունը, հետևաբար, պարտավորություն ուներ սահմանելու օրենսդրության նվազագույն սահմանափակում դիմումատուի կարգավիճակում գտնվող մարդկանց համար իրենց սեփականության իրավունքները արդյունավետ պաշտպանելու հնարավորություն տալու նպատակով: Դիմումատուն երկու հայց էր ներկայացրել իր իրավունքները վերականգնելու նպատակով: Առաջինը՝ սնանկության գործով կառավարչի դեմ որպես բանկի կառավարիչ, մերժվել էր ակտիվների բացակայության պատճառով:

Երկրորդը՝ անձամբ սնանկության գործով կառավարչի դեմ, նույնպես մերժվել էր և իրավասությանը վերաբերող հիմքով, և որովհետև այն ճանաչվել էր վաղաժամ: Ինչ վերաբերում է այս հիմքերից առաջինին, ապա Դատարանը գտավ, որ այդ ժամանակ

իրավասությանը վերաբերող օրենքով նախատեսված կանոնները անհասկանալի էին և մինչև իրավասությանը վերաբերող հարցի ծագումը առևտրային դատարանները դիմումատուի հայցը ուսումնասիրել էին ներպետական արդարադատության համակարգի երեք ատյաններում: Հետևաբար, ցանկացած սխալ, որ դիմումատուն գործել էր արդարադատության համակարգի շրջանակներում չի կարող իր դեմ օգտագործվել: Ինչ վերաբերում է երկրորդ հիմքին՝ Դատարանը ընդունեց, որ սնանկության գործով կառավարչի դեմ դիմումատուի բողոքները ուսումնասիրելու ներպետական դատարանների մերժումն հիմնավորված էր, քանի որ սնանկացման դատավարությունները չէին ավարտվել, և կար երկու անգամ փոխհատուցում ստանալու վտանգ ըստ երևույթի նույն ֆինանսական կորուստի համար: Մինչև անձամբ սնանկության գործով կառավարչից վնասների փոխհատուցում պահանջելու հնարավորություն ունենալը չբավարարված պարտատերի համար արդարացված էր սպասել մինչև պարտապան ընկերությունը կդադարեցնի իր գոյությունը: Դիմումատուի գործում լուծարումը ավարտվել էր սնանկության գործով կառավարչի դեմ դիմումատուի հայցը մերժվելուց ընդամենը ութ օր հետո: Դրանից հետո դիմումատուն կարող էր սնանկության գործով կառավարչի դեմ վնասի փոխհատուցման վերաբերյալ հայց ներկայացնել, սակայն նման կերպ չգործեց: Ընդհանուր առմամբ, օրենքը նախատեսում էր «հետաձգված» փոխհատուցման իրավական պաշտպանության միջոց, որը դիմումատուն չօգտագործեց: Անձամբ սնանկության գործով կառավարչից փոխհատուցում պահանջելու իր

իրավունքի ժամանակավոր սահմանափակումը չէր ազդել իր իրավունքների էության վրա և մնացել էր պետության թույլատրելի հայեցողության լայն շրջանակում սնանկության դատավարության ընթացքում մրցակցող անձնական շահերի ուսումնասիրության ժամանակ:

Քննարկվող ժամանակահատվածում առկա օրենսդրության սահմանափակումը, այսպիսով, համապատասխանում էր պետության դրական պարտավորությանը՝ սահմանել միջոց Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված դիմումատուի իրավունքների պաշտպանության համար:

Եզրակացություն՝ խախտում չկա (տասներկու ձայն ընդդեմ հինգի):

Գույքի օգտագործման վերահսկողություն

Մեղադրյալի այրիի սեփականության բռնագրավումը. խախտում չկա

Silickienė v. Lithuania

Գանգատ թիվ 20496/02

Վճիռ 10.4.2012 [II բաժանմունք]


(Տե՛ս վերը հոդված 6 § 2, Էջ 16)

Ընդդատության զիջումը Մեծ պալատին 30-րդ հոդված

Georgia v. Russia (II)

Գանգատ թիվ 38263/08 [V բաժանմունք]

(Տե՛ս վերը հոդված 33, Էջ 26)



ԴԱՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բրայթոնի Կոնֆերանսը Դատարանի ապագայի վերաբերյալ

Բարձր մակարդակի Կոնֆերանսը Դատարանի ապագայի վերաբերյալ կազմակերպվել էր Միացյալ Թագավորության կողմից Բրայթոնում 2012թ-ի ապրիլի 18-ից 20-ը, որը հաջորդում էր Ինտեռլակենի (2010թ) և Իզմիրի (2011) Կոնֆերանսները, որի ընթացքում Եվրոպայի Խորհուրդի անդամ պետությունները միաձայն համաձայնվեցին, որ Դատարանի բարեփոխումները անհրաժեշտ են Կոնվենցիայի համարգի արդյունավետության շարունակականությունը ապահովելու համար: Բրայթոնի Կոնֆերանսի նպատակը կայանում էր կոնկրետ բարեփոխումների փաթեթի համաձայնեցման մեջ, որպես երաշխիք, որ մինչ 2015թ-ը Դատարանը կարողանա մերժել իր վարույթում գտնվող անկասկած անընդունելի գանգատները: Կոնֆերանսի վերջում ընդունված հռչակագիրը շարադրեց առաջարկված բարեփոխումները: Այն ներառեց դիմումը Դատարան ուղարկելու ժամկետի նվազեցումը վեց ամսից մինչև չորսը և պետություններին նպաստելը ներպետական մակարդակում Կոնվենցիայի իմպլեմենտացման բարելավելուն և արագորեն ու արդյունավետ գործել Դատարանի վճիռների հետ կապված հարցերում, իրենց պարտավորությունները իրականացնելու և կրճատել Դատարան ներկայացվող բողոքների կուտակումները՝ դադարեցնելով կրկնվող դիմումների ուղարկումը:

Բրայթոնի Կոնֆերանսի գլխավոր էջին հղումը (<www.echr.coe.int> – Դատարան – Դատարանի բարեփոխումներ)

2. Ընտրությունը

2012թ-ի ապրիլի 24-ին Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը Բելգիայի կողմից Դատարանի դատավոր ընտրեց Փոլ Լեմմենսին: Փոլ Լեմմենսը ընտրվեց ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ ինը տարի պաշտոնավարման ժամկետով սկսած 2012թ-ի սեպտեմբերի 13-ից:

ՎԵՐՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Արդարացի փոխհատուցման պահանջների վերաբերյալ պրակտիկայի ուղեցույց

Դատարանի պրակտիկայի ուղեցույցը արդարացի փոխհատուցման դիմումների վերաբերյալ այժմ առկա է Դատարանի համացանցային կայքում հետևյալ լեզուներով՝ հոլանդերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն և թուրքերեն (<www.echr.coe.int> – Հիմնական տեքստեր):

2. Տեղեկատվական-թեմատիկ թերթիկը գերմաներեն և ռուսերեն լեզուներով

Տեղեկատվական-թեմատիկ թերթիկը Դատարանի նախադեպերի վերաբերյալ առկա է գերմաներեն և ռուսերեն լեզուներով Գերմանիայի կառավարության ֆինանսավորմամբ: Նրանք կարող են ներբեռնվել Դատարանի համացանցային կայքից («www.echr.coe.int» – Մամուլ):

Informationsblätter zur Rechtsprechung
(գերմաներեն)
Տեղեկատվական-թեմատիկ թերթիկ
(ռուսերեն)

3. Դատարանը 50 հարցերում

Նախապես չինարեն, չեխերեն, էստոներեն, գերմաներեն, իտալերեն, ռուսերեն, թուրքերեն և ուկրաիներեն թարգմանված այս բրոշյուրը, որը ներկայացնում է ընդհանուր տեղեկություն Դատարանի մասին, այլժամ առկա է հունարեն և իսպաներեն լեզուներով: Մի շարք լեզվաբանական տարբերակները կարող են ներբեռնվել Դատարանի համացանցային կայքից («www.echr.coe.int» – Դատարան):

To EΔΔΑ σε 50 ερωτήσεις (հունարեն)
El TEDH en 50 preguntas (իսպաներեն)

4. 2011թ-ի տարեկան զեկույց. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը

Նախարարների կոմիտեի 5-րդ տարեկան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերահսկողության վերաբերյալ զեկույցը հրապարակվեց 2012թ-ի ապրիլին: Ձեկույցը ներառում է 2011թ-ի կատարման ընթացքի զարգացման հիմնական միտումներն ընդգծող մանրակրկիտ վիճակագրությունը և Նախարարների կոմիտեի առջև առկա կատարման գործերի ամենակարևոր զարգացումների թեմատիկ ակնարկը: Այն կարող է ներբեռնվել Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության համացանցային կայքից: